



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6329

Պ. ՊԻՍՍԵԿՎ.

ԸՆԴՀԱՅԵՄ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ  
ՅԵՎ ԽՈՏՈՐՈՒՄՆԵՐԻ

ԿՈԼԽՈԶԾԻՆԵՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԸՆՊԱՐԻԳՈՒՄ

Թարգմ. Տ. Խ.

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՑՈՒ. ՀՐԱՅ.  
Մասկու [redacted] Թուառվայ Դոն

1931—VII

ՅԿՊ 13  
Դ-52

12 FEB 2014

ԹՇՀԱՌ. ԺՈՂՈՎՐԴԻ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍՏՈՎԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

6329

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյիվ.—Սոցխաբստական շինարարության նոր ետապը	6 հ.
2. Խուռքիլում—Կուլտովի կոլխոզի թշնամիք	5 հ.
3. Դրույտանախական կամունայի կամանագործություն	2 հ.
4. Սաղին.—Պատասխան ընկեր կոլխոզներներին	5 հ.
5. Մ. Գիգայան.—Կոլխոզների մասին	6 հ.
6. Վ. Խավանով.—Նոր հասալում	5 հ.
7. Դրույտանախական արտօնիք կանոնագործություն	2 հ.
8. Կողման աշխատանքը կոլխոզում	3 հ.
9. Ա. Անդրեյիվ—Հյուս, Կովկ, պառագանեաւության սովորակա-	2 հ.
ուղարկան բնողիքները	
10. Կայնիմ.—Խնչղին կազմակերպել և փարել կաթնառնուեսու-	3 հ.
թյունը կոլխոզներում	
11. Ա. Անդրեյիվ.—Սոցխաբստական շինարարության գոտում	8 հ.
12. Հյուս, Կովկ, Յերկը, ձերախոտագործական միության գիմումը	2 հ.
13. Հեղ(ը) Կենտուկոմի աշխատանքը (ընկ, Վորոշիլովի զեկուցումը)	15 հ.
14. Ա. Հովհաննիսան, յերդ մարտական փորձի (բանտառեղծու-	
թյունները)	
15. Հյուս, Կովկ, յերկրային 6 կուսկոնքներուցիսի բանաձեռքը	8 հ.
16. Զարգացրեք կենդանաբուծությունը կոլխոզներում	3 հ.
17. Յերկացաց որեւէի կուլտուրան և կ. կ.	6 հ.
18. Միիկալա.—Գիղի նոր կենցաղը կոլխոզներում	5 հ.
19. Սկզբունքում.—Պաշտպանեցնեք մասամբներին վարտկումը	5 հ.
20. Թօլզովսկի.—Առաջին ոգուն թյուն ենթանդացած պաւլ, կեն-	
դանիներին	6 հ.
21. Հնդամյակի յերրորդ տարվա շնորհին	16 հ.
22. Դրույտանախական միասնական հարկը և գ. ա. սոց. վերա-	
կառուցումը	10 հ.
23. Ա. Ի. Մենդելեյովի հայցանատիների բերքահավաքը և կալաբ	8 հ.
24. Միիկիմանի Բանջարենոցույն կուլտուրաների խնամքը	8 հ.
25. Պ. Մ. Յանոսին Արտադրական խորերակցությունները կող-	12 հ.
խոններում	
26. Ա. Գ. Բանաճյան—Անանաբուժական կոլխոզի և նըս	20 հ.
մասնաճյուղերի կոռուպտումը	
27. Ա. Մենաքչի—Եղբուրդների վերընարությունների հիմնական	7 հ.
խնդիրները	
28. Առհուբերտների վերընարությունների գործնական խնդիրները	8 հ.
29. Ամրապնդիք ինչունըները (պիետիզա)	10 հ.
30. Աւաքինում—Կուլտուրական վերացումը և խորեւրդների	7 հ.
խնդիրները	

ՀԿՊ(Յ)

Դ-52

16

25 AUG 2005

14 NOV 2009

Գ. ՌԱՄԱԿԱԳ.

ՀՆԴԻԴԵՄ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ  
ԽԱՏՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՈԼԽՈԶՁՁԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՍԵՊԱՐԻԶՈՒՄ

I. ԿՈԼԽՈԶՁԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ  
ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1930 թվականին բերքի հավաքման և յեկամտի բաժանման, աշնանացանի և աշնանավարի հետ զուգընթաց՝ անհատականների մեջ նոր ուժեղ հոսանք առաջացավ գեպի կոլխոզները: Զքավոր-միջակ մասսայի շարժումը գեպի կողիող շարունակվում և ուժեղանում է: Յերկրորդ կոլխոզային ցանքսի ընթացքում կոլխոզներում ընդդրկված են բոլոր գ. տնտ.-ի 52,7 տոկ.

Հնդամյակի տնցած յերկու տարին ցայտուն կերպով ցույց տվին, վոր յերկը. գլուղատնուեսության մեջ արմատական բեկում և կատարվում: Սոցխաբստական հատվածի շտենակած առձգումը միաժամանակ տալիս և դյուղատնուես-

23493-6

15828-52

կան արտադրության ապրանքայնության լարձրացումը Ցանքսերի տարածությունն արգեն 1930 թ. հասցված և 127 միլիոնից ավելի հեկտարի հանդեպ 1929 թ. 118 միլիոն հեկտարի հացահատիկների ընդհանուր բերքը 1929 թվականի հետ համեմատած՝ աճել և գրեթե 22 տոկոսով և 87 միլիոն տոննից ավելի յն:

Մինչև 1930 թվ. գեկտեմբերի 1-ը աճրողջ ԽՍՀՄ կուլտիվ տնտեսությունների մեջ կազմակերպված եյին 6 միլիոն 150 հազար գյուղացիական անտեսություններ կամ Խորհրդային Միության բոլոր գյուղացիական անտեսությունների համարյա մեկ քառորդ մասը, իսկ հիմնական հացահատիկային շրջաններում կոլխոզներում կազմակերպված եյին գյուղացիական անտեսությունների համարյա կեսը (49,3 տոկոս). սովխոզները, վորոնք անցած տարի ցանել եյին 5 միլիոն հեկտար և կոլխոզները—արդեն տալիս են յերկրին հացահատիկների ամբողջ ապրանքային արտադրանքի կեսը: Խոշոր առաջադիմություններ մենք ունենք նաև անասնաբուծության ասպարիգում:

Անասնապահական անտեսության հետամնացությունը, վորը բացատրվում է նրա անհատական, մանր-ապրանքային ձեերով, տարերային աղետներով հիմնական անասնապահական շրջաններում (Չութ), ապա նաև կուլակության կողմից անասունների չարամիտ վոչնչացումով, —այդ հետամնացությունը կուսակցությունը և խորհրդային իշխանությունը վոչնչացնում են նույն ուղիներով վորոնցով լուծվում են հացահատիկային տնտեսության խնդիրները, այսինքն հատուկ անասնապահական կոլխոզներ և սովխոզներ կազմակերպելով: Այդ ասպարիգում մենք արգեն խոշոր հաջողություններ ունենք՝ արգեն համայնացված են ձիյների 17 տոկոսից ավելին և կուպերի 7 տոկոսը, սովխոզներում միայն

խոշոր յեղջյուրավոր անասուններ կան մոտ սեկ ու կես միլիոն գլուխ:

ՀԿ(թ)կ Կենտկոմի և ԿՎՀ դեկտեմբերյան միացյալ պըլենումում հաշվառքի յենթարկված՝ կուսակցության և Խորհը դային Միության այդ նվաճումները վկայում են, վոր կուսակցության գիծն ուղղված, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, ամբողջապես և լիովին արդարացրեց իրեն, վոր գյուղատնտեսության հետագա ծավալումը—մեր գյուղի գրության բարեկավման և նրա հետագա զարգացման միակ ուղին ե: Հիմնվելով կոլխոզինարարության նախընթաց հաջողությունների վրա, ապա նաև հաշվի առնելով չքավոր-միջակ մասսաների աճող ձգտումը դեպի կոլխոզները, ՀԿ(թ)կ Կենտկոմի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան պիենումը մատնանշեց, վոր 1931 թվականը կուեկտիվացման հետագա բուռն աճման տարի յե հանդիսանալու, վորի ընթացքում Միության գլխավոր հացահատիկային շրջաններում մենք հիմնականում կավարտենք գյուղի կուեկտիվացումը:

Գործնականորեն պիենումը մատնանշեց, վոր 1931 թվականին, հնգամյակի յերրորդ տարում, մենք պարտավոր ենք՝

1) Հիմնական հացահատիկային շրջաններում (Ներքին և Միջին Վոլգա, Հյուս. Կովկաս, Ռւկրաինայի հարթավայրերը) ընդգրկել կոլխոզների մեջ գյուղացիական անտեսությունների 80 տոկոսը. դա նշանակում ե, վոր այդ ուայոններում մենք հիմնականում ավարտելու յենք գյուղացիական անտեսության կուեկտիվացումը և կուլակության վերացումը վորակեա դասակարգի:

2) Մնացած հացահատիկային ռայոններում (Միքիր, Ռւբալ, Կենտրոնական Սևանող Շրջան, Ռւկրաինա—անտառային հարթավայրերը, Կազմակատան—հացահատիկային ռայոնները) կուեկտիվացման յենթարկել գյուղացիական տնտեսությունների կեաը:

3) Սպառող շրջաններում (այն շրջաններում, վորակեցից հացահատիկ չի արտահանվում. Հյուսիսային յերկրաշաբ, լենինգրադի շրջանը և ուր.) կողեկտիվացումը հասցնել բոլոր տնտեսությունների մինչ 20-25 տոկոսին:

4) Ճականդեղի և բամբակարուծական շրջաններում կուռզոնների մեջ ընդգրկել խոշոր տնտեսությունների կեսը:

Պլենումի այդ վերջումների կիրառումն այնպիսի դրույթուն կատեղի, յերբ Խորհրդային Միության գյուղացիան անդունիքների, կեսը կազմակերպված կլինի կուռզոններում: Կամակած չկա, վոր մենք կլուծենք արդեն այդ խնդիրը, Դրան գրավական են կողեկտիվացման այն հաջողությունները, վորոնք մենք ունենք անցած յերկու տարիների ընթացքում և չքավոր ու միջակ տնտեսությունների այն ձգուումը դեպի կոլխոզները վորը նկատվում է ամենուրեք ներկայումս: Այդ ձգուումը նոր կոլխոզներ կազմանուրեք կերպելու և հանրու լայնացնելու նպատակով ողտագործելու հերպելու և այլպիսով կուսակցության 16-րդ համագումարի և ՀԿ(բ)Կ կենտրոնի և ԿՎՀ դեկտեմբերյան պլենումի վորոշումները լիրվին իրագործելու համար անհրաժեշտ ե՝ առաջինը. կունիկիվացման ամբողջ աշխատանքը կատարել կոլեկտիվացման աւղիների, տեմպերի յեվ մերօնիների մասին կուսակցության սիած հրահանգների համաձայն:

Յերկրորդ վնասկան հականարկած հասցնել աջ յեվ «ձախ» ապրուենիսների փորձերին՝ դանդաղեցնելու յեվ խեղարյուրելու գուղատնիքուրյան կունիկիվացման ընթացքը:

Յերրորդ. հաշվի առնել և չկրկնել այն սխաները, ինեղաթյուրումներն ու շեղումները, վորոնք նկատվում եքին անցած տարվա դաշնանը և վորոնց դեմ կուսակցությունը իր կենտրոնի դեկավարությամբ այնպիսի վճռական պայքար տարափ:

Դյուղատնեսության կողեկտիվացման համար հաջող աշխատանքի այդ յերեք պայմաններն իրարից անբաժան են և այսպիս ասած՝ լրացնում են մեկը մյուսին: Զի կարելի պայքարել շեղումների և սխաների դեմ, առանց գիտենալու կուսակցության գիծն այդ կարեւորագույն աշխատանքում: Զի կարելի կավել ոպորտունիզմի դեմ, առանց պայքարելու սխաների և շեղումների դեմ, առանց իրագործելու կուսակցության գիծը կոլխոզինարարության ասպարիզում: Զի կարելի իրագործել կուսակցության այդ գիծը, առանց պայքարելու ոպորտունիստական խեղաթյուրումների, սխաների և շեղումների դեմ:

Սակայն ինչնիւմն ե կայանում կուսակցության գիծը կոլխոզինարարության ասպարիզում: Այդ գիծն ամենայն ճշտությամբ և պարզությամբ տալիս են կուսակցության 16-րդ համագումարի վորոշումները գյուղատնտեսության կողեկտիվացման հարցերի մասին: Այդ պատճառով կոլխոզինարարության ասպարիզում շեղումները և խեղաթյուրումները վերլուծելու և հասկանալու համար, ծանոթանանք կարճառու կերպով կուսակցության 16-րդ համագումարի՝ գյուղատնտեսության կողեկտիվացման մասին տված հիմնական հրահանգների հետ:

## 2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻԾԸ ԿՈԼԽՈԶՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԱՐԻՉՈՒՄ

Բնորոշելով մեր յերկրի սոցիալիստական շինարարության ներկա շրջանի եյությունը, 16-րդ համագումարն ասաց:

«Սոցիալիստական շինարարության աճումը, կապիտալիստական տարրերի վրա հարձակման ուժեղացումն անհապաղորեն առաջ բերին դասակարգային պայքարի սրումը

յերկրում կուլակային-կապիտալիստական տարրերի կողմից և նրանց կատաղի դիմադրության փորձերը։ Հենվելով գյուղի բատրակէ-չքավոր մասսաների աճող ակտիվության վրա, ամրապնդելով դաշինքը միջակի հետ, կուսակցությունը ջարդեց կուլակության հականեղափոխական սարսոտածն ու տրամադրությունը, հաջողությամբ անց կացրեց հացամթերութիւնը և հացահատիկների զգալի ռեզերվային ֆոնդ կուտակեց։ Կուսակցության ճիշտ քաղաքականության հետեանքով միջակ մասսաների վճռական շրջադարձը դեպի սոցիալիզմ իր ցայտուն արտահայտությունը դտավ հզոր կոլխոզային շարժման մեջ, վորը 1929 թվ. վերջում գյուղացիական տնտեսությունների միլիոնավոր մասսաներ ընդդրկեց, դասակարգային ույժերի նոր փոխհարաբերություն ստեղծելով յերկրում, կոլխոզ մտնող միջակին խորհրդային իշխանության հենարան դարձնելով, պայմաններ ստեղծելով փոխարինելու հացահատիկի կուլակային արտադրությունը՝ սովխոզների և կոլխոզների արտադրությամբ և հնարավորություն տալով կուսակցությանը կուպակի սահմանափակման և յետ մզելու լողունգից համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությանը, վորպես դասակարգ վերացնելու լոգունդին անցնելու։

Համագումարն ընդգծում և այդ լոգունդի խոշորադույն պատմական նշանակությունը, վոր նշանակում և բանվոր դասակարգի գրոհը կապիտալիստական շահագործման վերջին հենարանի վրա մեր յերկրում (Հ(բ)կ 16-րդ համագումարի՝ կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունած բանաձեց):

Այդպիսով ներկա ետապի հիմնական և ամենակարևոր բնորոշ գիծն և հանդիսանում այն, վոր գյուղացիության հիմնական մասսան—միջակները վճռականորեն, ամբողջ մաս-

սայրով դարձան դեպի կոլխոզները, ամբողջ մասսայով մտան նրանց մեջ։

Այդ շրջադարձը գյուղացիության մեջ մի անդամից չը կատարվեց, 12 տարուց ավելի հարկավոր յեղավ, վորոնց ընթացքում կուսակցությունը քայլ առ քայլ մտցնում եր գյուղացիական մասսաների մեջ տնտեսավարության կոլեկտիվ ձևերի շահավետության և անհրաժեշտության հասկացողությունը։

Գյուղացիության կոլեկտիվացման անցնելն սկսվեց զեռհարկության առաջին սարիներում։ Ճիշտ և, այն ժամանակ գեռ վնասովում եյին կոլեկտիվացման ձեերը, կոլեկտիվացման եյին յենթարկվում զեռ շատ քչերը։ Սակայն այդ շարժումը, յերկրի ինդուստրացման ասպարիզում մեր ունեցած հաջողությունների շնորհիվ, մինչև 1929 թվի սմառը հակայական ծավալում ստացավ։ Առանձին անհատների և խմբակների շարժումը, վոչ միայն չքավոր, այլ և միջակ գյուղացիության, մասսայական արշավի վերածվեց կոլեկտիվացման համար։

Այդ պայմաններում մեր կուսակցության առաջ իր ամբողջ սրությամբ առաջադրվեց մի բարդագույն խնդիր—կոլխոզային շարժման ղեկավարությունն այնպես կազմակերպելը, վոր այդ ղեկավարությունը համապատասխանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար պայքարելու մասին լինինյան ցուցմունքներին։ Այդ պահանջից յենինով, կուսակցությունն իր աշխատանքը կոլխոզինարարության զարգացման համար կառուցեց հետեւյալ հիմնական լինինյան գրույթների վրա։

Առաջին կոլեկտիվացումը պետք և կատարվի գյուղացիության չքավոր և միջակ մասսաների կամավոր ցանկության հիման վրա, վոչ մի ստիպողականություն և վարչական միջոցներ տեղ չպիտի ունենան։

Յերկրորդ. Կոլեկտիվացումն իրագործելիս չի կարելի մեկ չափով մոտենալ Խորհրդային Միության զանազան շըրջաններին, վորոնք հավասարաչափ պատրաստված չեն կուլտիվացման համար (առաջավոր շրջաններ—դարգացած հացահատիկային կուլտուրաներով, հետամնացները—ազգային շրջանները և ուր.)։ Առաջավոր շրջաններում կոլեկտիվացման տիմապերն ավելի արագ պետք է լինեն, իսկ հետամնաց շրջաններում—ավելի յերկարատև։

Յերրորդ. Կոլխոզինարարության ղեկավարությունն այսպես պիտի իրագործվի, վոր կոլեկտիվացման ընթացքում կոլխոզինարարության հիմնական ձերից—արտելից շահցնել վաղորոք ուրիշ ձևերի։

Չորրորդ. Կոլեկտիվացման ծավալման հետ կապված՝ կուլակության գեմ պայքարի ձերն ու մեթոդները պետք ե համապատասխանեն առանձին շրջանների կուլեկտիվացման աստիճանին։ Համատարած կոլեկտիվացման շրջաններում մենք պետք ե անցկացնենք կուլակության վոչնչացումը վորպես դասակարգի։ Ուրիշ շրջաններում կուլակության գեմ պայքարելու հիմնական ձեռ պիտի լինի կուլակության սահմանափակման և յետ մղելու միջոցառումների իրագործումը, սակայն այն հաշվով, վոր այդ աշխատանքը համատարած կուլեկտիվացման անցնելու ուրիշ նախապատրաստական միջոցառումների հետ միասին—ուղղված լինի մեր հիմնական լողոնդի իրագործմանն անցնելու, այն ե՛ կուլակության վոչնչացումը վորպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման հիմնա վրա։

Հինգերորդ. Գյուղացիական տնտեսությունների կուլեկտիվացումը պիտի կատարվի գյուղում պրոլետարական դեկավարության ուժեղացման և գյուղի ու քաղաքի արտադրական կապի (սմիջկայի) հիման վրա։ Բացի դրանից, կո-

լեկտիվացման կիրառման անհրաժեշտ պայմաննը՝ պետք ե լինի գյուղի չքավորությանը կազմակերպելու և միջակի հետդաշնքն ամրապնդելու ուժեղ աշխատանքը։

Կոլխոզարժման ղեկավարությունն իրագործելով, կուսակցությունը հաստատ կիրառվ կանգնեց լենինյան ուղիի վրա։ Այդ քաղաքականության հետևանքով, չնայած կոլեկտիվացումը վիճեցնելու աջերի փորձերին, չնայած «Ճախերի» շեղումներին և խեղաթյուրումներին (դրա մասին—ներքեւ)՝ կուսակցությունը խորորագույն հաջողություններ ձեռքբերեց գյուղատնտեսության կոլեկտիվացման դորձում։

1) Մինչև 1930 թվի դեկտեմբերի 1-ը ԽՍՀՄ կոլխոզներում կազմակերպված են 6 միլիոն 150 հազար գյուղացիական տնտեսություններ, կամ Խորհրդային Միության գյուղացիական տնտեսությունների համարյա մեկ քառորդ մասը։

2) Հացահատիկային հիմնական ռայոններում (միջին և ներքին Վոլգա, Հյուսիսային Կովկաս, Ռւկրաինա-Դաշտավայշ) կուլեկտիվացման և յենթարկված գյուղացիական տնտեսությունների կեսը։

3) 1930 թվի ամառը կուլեկտիվ անտեսությունների ցանքսերի տարածությունը կազմում եր 36 միլ. հեկտար, կամ ցանքսերի ամբողջ տարածության 36 տոկոսը։

Սակայն դա մասսայական կուլեկտիվացման միայն գեռառաջին քանակային նվաճումներն են։ Կոլխոզային շինաւրարության նվաճումների ներքին եյությունը ցույց տալու հ ամար ընկ. Յակովլես «Կոլխոզային շարժումն ու գյուղատնտեսության վերելքը» կոչված իր ճառում 16-րդ համագումարում) ասում եր։

«...Նախապատերազմյան շրջանում կալվածատերն ու կուլակը ցանում եյին մոտ 35 միլիոն հեկտ. հացահատվկ.

Կուլակը 1927 թվականին մոտ 10 միլիոն հեկտ. հացահատիկային ցանքս ուներ, իսկ այս գարնանը, մասսայական կոլխոզային ցանքսի գարնանը, շնորհիվ նրան, վոր կոլխոզներում կազմակերպված են 6 միլիոն գյուղացիական տնտեսություններ, մենք համայնացրած սեկտորում մոտ 30 միլիոն հեկտար հացահատիկային ցանքս ունենք։ Հետևաբար մասսայական, կոլխոզային ցանքսի առաջին գարնան հետեւանքով կոլխոզներն ու սովորողները հացահատիկների ցանքների տարածությամբ փոխարինել են նախապատերազմյան կուլակին և կալվածատերերին, մի քանի անգամ գերազանցելով կուլակային ցանքսի չափը, վորը տեղի ուներ յերեք տարի առաջ։

Սակայն այս արդյունքներն ել 1930 թվի աշնանացանք հետևանքով գերազանցված են։ Աշնանացանքների տարածությունն անցած տարվա հետ համեմատած աճել ե 2 միլիոն հեկտարով, ըստ վորում այդ աճման հիմնական մասը կոլխոզների վրա յե ընկնում։

Սա վկայում ե, վոր կոլխոզինարարության ասպարիզում կուսակցության գլխավոր գծի վճռական և կտրուկ կիրառումն ապահովեց մեզ այնպիսի խոշոր սոցիալիստական հաղթանակ, վոր գերազանցում ե բոլոր պլանային նախատեսումները։ Այդ հաղթանակը, կրկնում ենք, մենք տարել ենք կուսակցության գլխավոր գծի հաստատ կիրառման հետեւանքով։

Այդ գծի գեմ պայքարում են վոչ միայն կուլակային-դասակարգային թշնամի տարրերը, այլ նաև աջ ուղղության իմաստները, վորոնք արտացըլում են կուլակի ցանկություններն ու հույսները։ Խեղաթյուրում եյին այդ գիծը նաև «ձախերը», ողնելով դրանով աջ ուղղություններին և կուլակին՝ պայքարելու կուսակցության գծի գեմ։ Միայն հաղթա-

հարելով այդ դժմաղրությունն ու խեղաթյուրումները, կուսակցությունը նվաճեց կոլխոզինարարության հաղթական ծավալումը։

Ինչումն են կայանում, ասկայն, կոլխոզարժման վիճակման աջ փորձերը և կոլխոզինարարության ասպարիզում կուսակցության գծի «ձախ» խեղաթյուրումները։

Նախ և առաջ կանգ առնենք կոլխոզինարարության վիճակման աջ փորձերի վրա, ավելի ճիշտ—աջ ուղղությունների կոլխոզարժման գեմ մղած պայքարի հիմնական մոմենտների վրա։

### 3. ԿՈՒՆՈԶՇԱՐԺՄԱՆ ՎԻՃԵՑՄԱՆ ԱՋ ՓՈՐՁԵՐԻ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

«Կոլեկտիվացման գեմ վճռականորեն դուրս յեկող աջ ուղղությունները փորձում եյին ոգտագործել կոլխոզարժման գծվարություններն ու հակամիջակային շեղումները, կենարունական կոմիտեյի և նրա քաղաքականության վրա նոր դրոհի համար։ Վերջին ժամանակներս մի շարք նոր յելույթներ են նկատվում անկասկած աջ ուղղությունների կողմից, վորոնք փորձում են վարկարեկել կուսակցության ամբողջ աշխատանքը կոլեկտիվացման և նրա հետ կապված կուլակության լիկվիդացիային ուղղված միջոցառումների դրույմ, վորոնք քարոզում են ինքնահոսի թերթան կոլխոզարժման ասպարիզում և լիկվիդատորական վերաբերունք գեպի կուսակցության հիմնական լողունգները սոցիալիստական շինարարության ներկա ետապում, դեպի համատարած կոլեկտիվացման, կուլակության, վորպես դասակարդ վերացնելու լողունգները։ (ՀԿ(Բ)կ 16-րդ համագումարի կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունված բանաձեկցից)։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման ասպարիզում կուսակցության քաղաքականության դեմ աջ ոպորտունիստական հարձակումներն արտահայտվում են նըրանում, վոր աջերը պնդում են անհատական գյուղացիության տնտեսության ուղղության վրա, հույս են դնում «կուլյակի սոցիալիզմի մեջ խաղաղ ներաճման վրա» և բացասում են, վոր առանց մանր ապրանքային արտադրության սոցիալիստական վերակառուցման չի կարելի առաջ շարժվել սոցիալիստական շինարարության ուղիով, Աջերը վրձուականորեն դեմ են գուրս գալիս կուսակցության գյուղում անցկացրած բոլոր ձեռնարկումներին: Վերցրեք հացամթերումները, վերցրեք անհատական հարկումը, սովորուների, կոլյոգների շինարարությունը—այս բոլոր հարցերում աջ ոպորտունիստները կուսակցության քաղաքականության դեմ են գուրս գալիս, անհատական գյուղացիական տնտեսությունների «պաշտպանության» անունով, պաշտպանելով կուլյակի շահերը:

Աջ ոպորտունիստների բռնած անհատական գյուղացիական տնտեսությունների զարգացման ուղին և նրանց յելույթներն ընդգեմ կուսակցության անցկացրած գյուղատնտեսության կոլեկտիվացման տանում են վոչ միայն դեպի կուլյակության ուժեղացումը, այլև դեպի կապիտալիզմի վերականգման հնարավորությունների ուժեղացումը մեր յերկրում:

Մեր յերկրում դեռ մինչև այս տարվա գարունը գերակշռում եյին մանր գյուղացիական տնտեսությունները, մանր արտադրությունը, իսկ «քանի վոր մանր արտադրությունը մեզ մոտ մասսայական և նույնիսկ վերակշռող բընույթ ունի և քանի վոր նա առաջ ե բերում կապիտալիզմ և բուրժուազիա, մասավանդ ՆԵՊ-ի պայմաններում, մշտա

կան և մասսայական չափերով, մեզ մոտ կան այնպիսի պայմաններ, վորոնք հնարավոր են դարձնում կապիտալիզմի վերականգնումը» (Ստալին):

Աջ ոպորտունիստների՝ կոլյոգներարությունը վիժեցնելու բոլոր փորձերին կուսակցությունը վճռական հականարկած հասցըրեց, մերկացնելով նրանց կուլյակային եյությունը: Իսկ կոլյոգներին նվաճումները հիմնովին ջարդեցին աջերի թերորիաները և ստիպեցին նրանց ղեկավարներին ճանաչել (ճիշտ ե, միայն խոսքերով), կուսակցության զվարավոր գծի ճիշտ լինելը և իրենց գրույթների ուսխալ լինելը:

Սակայն աջ «թերորիաները» և աջ պրակտիկան դեռայժմս ել գոյություն ունեն և զվարավոր վտանգ են ներկայացնում այն պատճառով, վոր կուլյակային վտանգն են արտահայտում, իսկ կուլյակային վտանգը ծավալված հարձակման և կապիտալիզմի արմատահանման ներկա մոմենտում հիմնական վտանգ է հանդիսանում մեր յերկրում» (Ստալին):

Կանգ առնելով կոլյոգներարության վիժեցման աջ փորձերի վրա, ը. Ստալինը կուսակցության 16-րդ համադրումարում ասում եր:

«Տեղ-տեղ ձայներ են լովում, վոր անհրաժեշտ ե հըրաժարվել համատարած կոլեկտիվացման քաղաքականությունից, տեղեկություններ կան, վոր նույնիսկ մեր կուսակցության մեջ. այդ գողագիտիք» կողմնակիցներ կան: Սակայն այդպես կարող են ասել միայն, կամա թե ակամա, կոմունիզմի թշնամիների հետ միացած մարդիկ: Համատարած կոլեկտիվացման մեթոդը այն անհրաժեշտ մեթոդն ե, առանց վորի անհնարին և ԽՍՀՄ բոլոր շրջանների կոլեկտիվացման հնգամյա պլանի իրագործումը: Խնչակես կարել

յե հրաժարվել նրանից, չդավաճանելով կոմունիզմին, չմատնելով բանվոր դասակարգի և գյուղացիության շահերը»:

Իր զեկուցման մի ուրիշ մասում, կոլխոզինարարության վերաբերյալ աջ թեորիաներն ավելի մանրամասն վերլուծելով, ընկ. Ստալինն ասում եր.

«Աջ ոպորտունիստները պնդում են, վոր Նեֆը ապահովում ե մեզ սոցիալիզմի հաղթանակը, հետևաբար կարելի յե չանհանդատանալ ինդուստրացման, կոլխոզների և սովխողների զարգացման մասին և այլն, գորովհետև հաղթանակն այսպես ասած ինքնահոսի կարգով ե ապահովված: Դա իհարկե ճիշտ չե և հիմարություն ե: Այդպես ասել— նախակում ե բացասի կուսակցության գերը սոցիալիստական շինարարության դործում, բացասի կուսակցության պատասխանատվությունն այդ շինարարության համար: Լենինը բոլորովին չի ասել, վոր «մեր սոցիալական կարգում անհրաժեշտը բացասի այդպիսի անջատման հիմքերը», սակայն յեթե այդ դասակարգերի միջև լուրջ դասակարգացին տարածայնություններ ծագեն, այն ժամանակ անջատումն անհապաղ կլինի:

«... Հետևաբար բանվոր դասակարգի և գյուղացիության անջատումը բացասակած չե, սակայն նա բոլորովին պարտագիր չե, վորովհետև և մեր հասարակակարգում կան այդ անջատման առաջն առնելու և բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման հնարավորությունները: Իսկ ինչ և հարկավոր այդ հնարավորությունն իրականություն դարձնելու համար: Անջատման առաջն առնելու հնարավորությունը իրականություն դարձնելու համար, անհրաժշտ և նախ և առաջ թաղել ինքնահոսի թերթիան, անհրաժշտ և կապիտալիզմի արմատները քանդել— հանել կոլխոզներ և սովխոզներ կազմակերպելով և կուլակության շահագործական ձգտությունների սահմանափակման քաղաքականությունից անցնել կուլակությանը, վորպես դասակարգ վոչընչացնելու քաղաքականությանը»:

Ինքնահոսի վրա հույս դնելով կոլխոզինարարությունը վեժեցնելու աջերի փորձերին ընկ. Ստալինի մերկացման

ների և գյուղացիների դաշինքն ապահովված կլինի, այսպիս ասած, ինքնահոսի կարգով: Դա նույնպես ճիշտ չե և ճիմարություն ե: Այդպես կարող են ասել միայն այն մարդիկ վորոնք չեն հասկանում, վոր կուսակցության, այն ել իշխանության գլուխ կանգնած կուսակցության քաղաքականությունը բանվորների և գյուղացիների դաշինքի ճակատագիրը վորոշող, հիմնական մոմենտն ե հանդիսանում: Լենինը բոլորավին բացասակած չեր համարում բանվոր դասակարգի և գյուղացիության անջատման վտանգը: Լենինն առում եր այն մասին, վոր «մեր սոցիալական կարգում անհրաժեշտը բացասի այդպիսի անջատման հիմքերը», սակայն յեթե այդ դասակարգերի միջև լուրջ դասակարգացին տարածայնություններ ծագեն, այն ժամանակ անջատումն անհապաղ կլինի:

«... Հետևաբար բանվոր դասակարգի և գյուղացիության անջատումը բացասակած չե, սակայն նա բոլորովին պարտագիր չե, վորովհետև և մեր հասարակակարգում կան այդ անջատման առաջն առնելու և բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման հնարավորությունները: Իսկ ինչ և հարկավոր այդ հնարավորությունն իրականություն դարձնելու համար: Անջատման առաջն առնելու հնարավորությունը իրականություն դարձնելու համար, անհրաժշտ և նախ և առաջ թաղել ինքնահոսի թերթիան, անհրաժշտ և կապիտալիզմի արմատները քանդել— հանել կոլխոզներ և սովխոզներ կազմակերպելով և կուլակության շահագործական ձգտությունների սահմանափակման քաղաքականությունից անցնել կուլակությանը, վորպես դասակարգ վոչընչացնելու քաղաքականությանը»:

Ինքնահոսի վրա հույս դնելով կոլխոզինարարությունը վեժեցնելու աջերի փորձերին ընկ. Ստալինի մերկացման

վոչինչ ավելացնել չի կարելի: Ամեն մելի համար պարզ պետք է լինի, վոր «ինքնահոսի» թեորիան աջերի համար միայն դժմակավորման միջոց և և քողարկում և կոլեկտիվացման և կուլակության պաշտպանման նրանց փորձերը:

Միթե կարելի յե ուրիշ կերպ, քան կոլխոզինարարության վիճեցնելու փորձ անվանել տեղաբեր աշ ոպուտունիստների արտահայտած այն թեորիան, վոր պետության ոգնությունը կոլխոզներին և կոլխոզնիկներին ավելորդ և, վորովհետև զյուղացիներն իբր թե իրենք «ինքնահոսի» կարդով կոլեկտիվացման կզան: Ի նկատի ունենալով այդ հակա-լենինյան թեորիաները, 16-րդ համագումարը «կոլխոզարժման և զյուղատնտեսության վերելքի մասին» ընկ. Յակովեկի զեկուցման առթիվ ընդունած բանաձեռնում մատնանշեց.

«Կոլեկտիվ հողագործության անցնելը կարող և կիրառվել ինչպես շատ անգամ շեշտել և լենինը, միայն խորհրդադյին պետության կողմից կոլխոզներին լայն կազմակերպական, նյութական և ֆինանսական ոգնության դեպքում:

«Յուրաքանչյուր հասարակակարդ առաջ և զալիս վորոշ դասակարգի ֆինանսական աջակցությամբ միայն» (Լենին, «Կոռպերացիայի մասին» հ. 18 հջ. 114).

Գյուղատնտեսության կոլեկտիվացման ճանապարհին բազմաթիվ գժվարություններ են կանգնած: Կոլխոզային շարժումը կարող և հաղթահարել նրանց միայն պետության ոգնությամբ և աջակցությամբ: Ահա թե ինչու դատապարտելի հանցանք և հանդիսանում աջերի թեորիան կոլխոզներին և կոլխոզնիկներին պետության կողմից ոգնություն չտալու մասին:

«Ինքնահոսի» այդ աջ թեորիայի յերկրորդ տեսակն են հանդիսանում հայտարարություններն այն մասին, վոր ավե-

լորդ և այնպիսի համառությամբ, ինչպես այդ անում և կուսակցությունը, ամրապնդել պրոլետարական ազգեցությունը գյուղում առնավորապես կոլխոզներում: Այդ հայտարարություններն ի նկատի ունեն բանվորներին դյուղ ուղարկելու աննպատակահարմարությունը (25 հազարականներ և այլն):

Այդպիսի դատողությունների գատապարտելի լինելը պրոլետարական պետության և մասնավորապես կոլխոզարժման վերաբերմամբ ակնհայտ է: Անբակառ պրոլետարական դեկալարությունը զյուղում—յերաշխիք և վոչ միայն կոլեկտիվացման, այլ յեվ կուսակցության յեվ խորեղային իշխանության բոլոր միջոցառութերի հաջողության: Միայն պրոլետարիատի դեկալարությամբ չխաղործերն ու միջակները կարող են կուլակի դեմ հաղթանակ տանել: Այդ մասին բազմաթիվ անգամ ասել են և լենինը և կուսակցությունը: Դա հաստատված ե գործնականում, զյուղատնտեսության կոլեկտիվացման աշխատանքների ամբողջ ընթացքով: Յեվ միայն կոլեկտիվացման թշնամիները, միայն կուլակների բարեկամները կարող են խոսել գյուղում պրոլետարական ազգեցության համար տարվող աշխատանքը թուղացնելու մասին:

Կուլակի պաշտպանություն են հանդիսանում նաև աջերի այնպիսի գատողությունները, վոր քանի վոր մենք գեռ չենք կարող գյուղին մատակարարել անհաժեշտ քանակությամբ գյուղատնտեսական մեքենաներ (տրակտորներ, կոմբայններ և այլն), ապա ուրեմն կոլեկտիվացումը մեզ մոտ մասսայական չափերով անհնարին և, վորովհետև կոլեկտիվացումը պետք և զարգանա բացառապես գյուղատնտեսության բարձր մերժացածածն չ'իմաց, վրա: Հարցն այդպիս դնել նշանակում ե անկման դատապարտում կոլեկտիվացման տրաող գործը, վորովհետև մերկ մամենտում բոլոր կոլեկտիվ

5828 - 52)

տնտեսություններն ապահովել տրակտորներով մեր արդյունաբերությունն անկարող ե: Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն ամեն միջոց ձեռք են առնում գյուղատեսության մեքենայական, տեխնիկական բազան ուժեղացնելու համար: Արդեն այս տարի մեքենա-տրակտորացին կայանների թիվն ավելանալու յի մինչև 1040 հատ, այսինքն 1930 թվի հետ համեմատած ՄՏԿ քանակն աճելու յի 4 անգամ: Դրանից սակայն չի հետևում, վոր նոր կոլխոզների կազմակերպումը հնարավոր ե միայն մեքենայական տեխնիկայի հիման վրա: Մեր տրակտորացին բազայի աճած կարողությունը նույնիսկ չի կարող բավարարել ավելի ու ավելի աճող պահանջը:

Այդ պատճառով, վճռական հականարված հասցնելով աջ ոպորտունիստների այդ թեորիաներին, կուսակցությունն ընդգծում ե, վոր ներկայումս, յերք մենք դեռ բախտականացափ զյուղատեսնեսական մեմենաներ չունենք, կոլխոզինարարությունը պետք ե զարգանա վոչ միայն զյուղատեսնեսական արտադրության մեմենայացման հիման վրա, այլ յեվ զյուղատեսնեսական հասարակ ինիվենտարը (կենդանի յեվ անկենդան) կոլխոզներում միացնելու հիման վրա: Այդպիսի կոլխոզները նախնական պետք ե համարել: Սակայն նրանցից վոչ մի գեղքում հրաժարվել չենք կարող սպասելով գյուղատնտեսական բարդ մեքենաներին: Անցյալ տարվա փորձը լիովին արդարացրեց կուսակցության այդ գրույթը: Անհատական տնտեսությունների կենդանի և անկենդան ինվենտարի հասարակ գումարումը կոլխոզիլ աշխատանքով ահազին արդյունքներ տվեց ցանքային տարածությունների լայնացման և բոլոր գյուղատնտեսական կամպանիաների կիրառման դրծում:

Կոլխոզինարարության ծավալման գրույթը մենք դեռ շատ մեծ գժվարություններ պիտի հաղթահարենք: Կոլխոզ-

շինարարության ծրագիրը, վորով նախատեսնված ե կազմակերպել կոլխոզներում Խորհրդային Միության բոլոր գյուղացիական տնտեսությունների կեսը և հիմնական հացահատիկային շրջաններում հիմնականում ավարտել կոլխոզիվացումը, իր երագործման համար կպահանջի կուսակցության և խորհրդային հասարակայնության բոլոր ույժերի լարումը: Իր անհապաղ կործանումն զգալով, կուլակությունը շտապ կերպով ոգտագործում ե գյուղի յետամաց խավերը՝ կոլխոզների գեմ պայքարելու համար, կատաղիորեն դիմադրում և մեր կոլխոզային արշավանքին: Ահա թե ինչու կուլակների պատվանումն աջ ոպորտունիսների կողմից, կոլխոզինարարույունը կասեցնելու նրանց փորձերը, վոր համապատասխանում են կուլակի շամերին, առանձնապես վտանգավոր են: Այդ պատճառով կոլխոզինարարության ճամբին կանգնած գժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ ե նախ և առաջ հաղթահարել զվարովին ջարդել ոպորտունիստներին, աջ թեքումը, վոր գլխավոր վտանգն և ներկայացնում մեր կուսակցության մեջ: Հստ այնմ վոչ մի գեղքում չի կարելի այնպիսի տեսակետ ընդունել վոր աջ ոպորտունիքն այժմ արդեն մերկացված ե կուսակցության կողմից և ուրեմն չի կարող բարդացնել կամ դանդաղեցնել կոլխոզինարարությունը:

Մերկացված են աջ թեքման իդեոլոգիան, նրա անմիջական և բացարձակ դեկավարները: Սակայն գյուղացիության հետամաց մասի մանր-սեփականատիրական տրամադրություններով սնվող և կուլակի կղձերն արտահայտող աջ թեքումը դեռ բոլորովին չի ջարդված: Նրա կողմնակիցները հայտնաբերվում են զասակարգային պայքարի սրման ընթացքում: Բացարձակ և գաղտնի նրանք ձգտում են կոլխոզինարարության ամեն մի հատվածում բարդացնել, կա-

սեցնել այդ շարժումը, Աջերի այդ ձգտումներն առանձնապես հաճախ են արտահայտվում կոլխոզինարարության պրակտիկայում: Յեկ շատ մեծ արթնություն պետք է հայտնաբերել մեր յերկրի սոցիալիստական վերաշինության այդ թշնամիներին ժամանակին հայտնաբերելու և մերկացնելու համար:

Վերջին ժամանակներս աջերը կոլխոզինարարության դեմ (ինչպես նաև սոցիալիստական շինարարության ուրիշ ասպարեզներում) իրենց մղած պայքարում նոր տակտիկայի յեն անցել: Դա կայանում է նրանում, վոր աջերը, ճանաչելով իրենց սխալները ձեւականորեն, վոչ միայն չեն հաստատում իրենց այդ խոստովանանքը աշխատանքով, պայքարելով կուսակցության գլխավոր գծի համար, այլ կամացուկ, գաղտագողի, կուսակցության վորոշումները սարուտաժի յեն յենթարկում, սպասում են «բարենպաստ մոմենտի» (նոր դժվարությունների և բարդությունների), իրենց պայքարը կուսակցության դեմ վերսկսելու համար: Աջերի այդ նոր մանյովը անհրաժեշտ է ամենախիստ հականարված հասցնել: Անա թե ինչու կուսակցության 16-րդ համագումարը ՀԿ(Բ)Կ կենտրոնի հաշվետվության առթիվ իր ընդունած քանաձնում այդպես կատեգորիկ կերպով ասաց:

«Համագումարն ամբողջ կուսակցության ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր ամեն գույնի ոպրոտունիստները, մանավանդ աջերը, նոր մանյովը են գործադրում, վորն արտահայտվում է իրենց սխալները ձեւականորեն ճանաչելու և կուսակցության գլխավոր գծի հետ ձեւականորեն համաձայնվելու մեջ, առանց հաստատելու իրենց խոստովանությունն աշխատանքով և կուսակցության գլխավոր գծի համար պայքարելով, վոր ըստ եյության նշանակում է միայն կուսակցության դեմ բացարձակ պայքա-

րից գաղտնի պայքարի անցնել, կամ ոպասել ավելի բարենպաստ պայքարանների, կուսակցության վրա գրոհը վերսկսելու:

Կուսակցությունն ամենաանողոք պայքար պետք է հայտարարի այդպիսի յերկերեսանության և խարեբայության և պահանջե բոլոր իրենց սխալները ճանաչողներից գործով, այն ե՛ կուսակցության հիմնական գիծն ակտիվ պաշտպանելով ապացուցել իրենց սխալներն ընդունելու անկեղծությունը:

Համագումարը հայտարարում է, վոր աջ ոպողիցիայի տեսակետներ ունեցողներն անկարող են մնալ ՀԿ(Բ)Կ-ի շարքերում...»:

Բոլոր ասվածից հետեւում է, վոր կոլխոզինարարությունը վիճեցնելու աջերի փորձերը մեզ համար ամենավլատանգավորն են հանդիսանում: Այդ պատճառով տեղական կազմակերպությունների (կուսակցական, խորհրդային, կոլխոզային, հասարակական) և բոլոր առաջավոր գյուղացիների (առաջին հերթին կոլխոզներին) բոլոր ույժերը պետք է ուղղվեն կոլխոզինարարությունը վիժեցնելու աջ փորձերի մերկացման, վորաեղից ել վոր դրանք բղխեն:

Նույնպիսի վճռական հականարվածի և մերկացման պիտի հանդիպի կուսակցական և բոլոր խորհրդային-հասարակական կազմակերպությունների կողմից մի շարք հակակուսակցական տարրերի յերկերեսանի աշխատանքը: Կուսակցության դեմ մղած բացարձակ պայքարում ջարդված ոպորտունիստներից մի քանիսը բոլոր ասպարեզներում, նույն թվում նաև կոլխոտիվացման ասպարիզում կուսակցության գծի դեմ գաղտնի պայքարի ստոր և վախկոտ մեթոդն են գործադրում: Խոսքերով պաշտպանելով կուսակցության գիծը, նրանք կամացուկ, ընդհատակյա խախտում են կուսակցության միջոցառումները, խեղաթյուրում են նրա վորոշումները

և այլն։ Յերկերեսներին, վորպես սոցիալական ամենակատաղի թշնամիներին, վորպես դավադիրների, մենք պարագաների ենք մերկացնել վոչ պակաս վճռականությամբ, քանի բացարձակ ոպորտունիստներին։

Վերջին ամիսներում, սերտորեն կապված յերկերեսանիների հետ, կուսակցության և նրա գծի դեմ համդես յեկավ աջ-«ձախ» բլոկը։ Նրա եյությունը կայանում և նրանում վոր աջ ու «ձախ» ոպորտունիստները կուսակցության դեմ մղած իրենց պայքարում միացան աջ պլատֆորմի վրա։ Կուսողինարարության վերաբերմամբ այդ բլոկը միմնույն դիրքերումն և կանոնած, ինչպես և աջ ոպորտունիստները։ Աջ-«ձախերը» դեմ են կոլեկտիվացման ասպարիզում կուսակցության ընդունած տեմպերին, դեմ են համատարած կոլեկտիվացման, դեմ են կուլակության վոչնչացման, վորպես դասակարգի։ Նրանք պաշտպանում են անհատական գյուղացիական տնտեսության զարգացումը, պաշտպանում են կուլակությունը։ Աջ-«ձախ» բլոկի պայքարի մեթոդները սերտորեն հարակցվում են յերկերեսանության հետ։ Պայքարն այդ ոպորտունիստների դեմ—կոլլոգինարարության հաջողությունների կարևորագույն պայմանն ե։ Միայն ոպորտունիքմի դեմ պայքարելով, ինչպիսի դիմակի տակ ել նրանք թագնված լինեն, հնարավոր ե իրադորել կոլլոգինարարության այն հակայական ծրագրերը, վորոնք ընդունել ե կուսակցությունը։

ՀԿ(Բ)Կ կենտկոմի և ԿՎՀ գեկտեմբերյան պլենումի ընդունած՝ կոլեկտիվացման պլանի իրագործումը կուսակցության դեմ աջ ոպորտունիստների պայքարի նոր աշխուժացում առաջ կրերի։ Նախատեսնելով այդ, անհրաժեշտ ե ամենայն համառությամբ մերկացնել ոպորտունիքմի եյությունը, կատաղիորեն պայքարել նրա բոլոր արտահայտումների դեմ։

#### 4. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍԽԱԼՆԵՐԸ ԿՈԼԽՈԶՇԻ-ՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

«... Համագումարն առանձնապես կարևոր է համարում, վորպեսզի կուսակցության ամեն մի անդամ պարզի իր համար կուսակցության գծի այն սխալների և աղավաղումների բնույթը, վորոնք տեղի ունեցան այս տարվա գարնանը, կունկալիվացումն անցկացնելու պրակտիկայում։

Այդ սխալների և խեղաթյուրումների արտահայտություններն եյին կոլլոգիները կազմակերպելիս միջակների և չքավորների վերաբերմամբ հարկադրական և բոնի միջոցները կիրառելը, արտելի անդամների մոտ յեղած սպառողական նշանակություն ունեցող՝ մանր անասուններն ու կովերը համայնացնելը, վոչ հացահատիկային շրջաններ փոխադրելը կոլեկտիվացման տեմպերի, վորոնք փորձով արդարացրին իրենց և ԿԿ վորոշումներով նախատեսնված են միայն հացահատիկային շրջանների համար, հապճեպով կոմունաներ ստեղծելն առանց համապատասխան նյութական և կազմակերպչական նախապարաստության կոլլոգ—«գիգանտներ» ստեղծելու անվան տակ, անկենսունակ, բյուրոկրատական կազմակերպություններ ստեղծելը, հրամանատարական սկըզբունքներով, կառավարության կողմից կոլլոգների համար նախասահմանված վարկերի ուշացնելը և կոլլոգներին առավարության կողմից վերապահված արտոնություններից զրկելը, կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նկատմամբ վարչական կոպիտ վերաբերմունք ցույց տալը և ընտրականությունը նշանակովությամբ փոխարինելը, վերևից հրամանատարություն անելը, միջակին հաշվի չառն ել և նրա տնտեսական փորձառությունը չողազգործելը, կուլտակի դեմ ուղղված պայքարի միջոցները միջակի վերաբեր-

ժամբ կիրառելը (ապակուկակացումը, ընտրական իրավունք-ներից զրկելը և այլն): (Ընկ. Ցակովիկ «Կոլխոզային շարժումը և գյուղացիության վերելքը» դեկուցման առթիվ չկ(թ)կ 16-րդ համագումարի ընդունած բանաձևից):

Պայքարելով կոլխոզշինարարությունը վիճեցնելու աջ փոքրերի դեմ, մենք դրա հետ միաժամանակ վոչ մի ըսպդ չպիտի թուլացնենք մեր պայքարը նաև կոլխոզշինարարության պրակտիկայում յեղած խեղաթյուրումների և սխալների դեմ, ամեն կողմից հաշվի առնել և չըրկնել նրանց:

Ուրիշ խոսքով—կոլխոզշինարարության ծավալման աշխատանքներում մենք պետք են խստորեն անցկացնենք լենինյան դրույթները, վորոնք, ինչպես մատնանշված են վերեւում, հիմնականում հետևյալումն են կայանում:

1) Վոր կոլեկտիվացումն անցկացվի չքալոր և միջակ գյուղացիների կամավոր ցանկության հիման վրա:

2) Վոր կոլեկտիվացումն անցկացվի գյուղում պրոլետարական դեկավարության ամրապնդման, բատրակների և չքալորների կազմակերպության, մեր դաշինքը միջակի հետ ամրապնդման հիման վրա:

3) Վոր կոլեկտիվացումն անցկացնելիս, նրա տեմպերի վերաբերմամբ հաշվի առնել Միության առանձին շրջանների առանձնատկությունները, վորոնք միատեսակ չեն պատրաստված կոլեկտիվացման համար:

4) Վոր կուլակի դեմ պայքարելու ձևերը համապատասխանեն կոլեկտիվացման ծավալման և վոչ մի դեպքում չըդիմէն միջակին:

Կոլխոզշինարարության մասին կուսակցության տված ցուցմունքների հիմքը կազմոլ հենց այս լենինյան սկզբունքների խախտման գծով են ընթացել տեղական կազմակերպությունների կողմից թույլ տված խեղաթյուրումներն ու

սխալները կոլեկտիվացման ասպարիզում: Այդ սխալների եյությունը, արմատը, ինչպես այդ բնորոշել են Ստալինն իր «Պատասխան ընկեր կոլխոզներին» հոգվածի մեջ, կայանում են դեպի միջակը յեղած սխալ մոտեցման մեջ:

«Միջակի հետ տնտեսական հարաբերություններում բըռնություն թույլ տալու մեջ. Նրանում, վոր մոռացության և արվում, վոր միջակ մասսաների հետ տնտեսական դաշինքը պետք ե կառուցվի վոչ թե բոնի միջոցների, այլ միջակի հետ համաձայնություն կնքելու, նրա հետ դաշինք հաստատելու հիման վրա, վոր մոռացության և արվում, թե, ներկա մոմենտում կոլխոզշինարարության հիմքն ե կազմում բանվոր գասակարգի և չքավորության դաշինքը միջակի հետ ընդգեմ կապիտալիզմի առհասարակ և ընդդեմ կուլակության առանձնապես»:

Քննենք կոլեկտիվացման ընթացքում տեղի ունեցած հիմնական խեղաթյուրումներն ու սխալները:

ԱՌԱՋԻՆԸ.—Կոլխոզների կազմակերպման ընթացում կամավորայան մասին լենինյան սկզբունքի խախտումը: Կուսակցության հրահանգների այդ խեղաթյուրումները հիմնականում բղխում են նրանից, վոր տեղական կազմակերպություններից շատերը, հաշվի չառնելով կենտրոնի ցուցմունքները կոլեկտիվացման տեմպերի մասին, նպատակ են դնում ինչ ել վոր լինի արդեն հենց այս տարվա գարնանն իրագործել համատարած կոլեկտիվացումը: Այդպիսի նպատակ դնելով իրենց առաջ, տեղական կազմակերպություններից շատերն սկսեցին և կիրառել այն, գործադրելով կոլեկտիվացման ժամանակ հրամայողական, վարչական, սպառնավերի, չքավոր և միջակ անհատականների ձնշման մեթոդը: Որինակ, գալիս ե գյուղիազորը, ժողով և հավաքում և այնտեղ հրամայում ե բոլոր գյուղացիներին—չքավոր և միջակ (իսկ դեպքեր են յեղել նաև կուակներին)—կոլխոզ մտնել-

բաժարվուղներին սպառնում և գյուղից քշել ձերբակալել, Հնաբողական իրավունքներից զրկել և այլն: Սակայն դեռ չարիքի փոքրագույնն և լինում, յեթե միայն սպառնում են: Իսկ շատ են յեղել և այնպիսի դեպքեր, յերբ այդ սպառնաւուքները հենց տեղն ու տեղը կատարվել են, ըստ վորում վոչ մի բացատրական աշխատանք չի տարվել, ամեն ինչ հիմնվել է հրամանի վրա:

Առանձին ուշադրության արժանի յենակ այն փաստը, վոր հրամանով գործող «կոլեկտիվատորները» վոչ մի շաղըություն չեն դարձրել (կամ շատ քիչ ուշադրություն են դարձրել) չքավորների մեջ նախնական մեծ աշխատանք կատարելու անհրաժեշտության վրա, նրանց կազմակերպելու և միջակի հետ համախմբելու համար:

Չքավորների կազմակերպումը և կոլեկտիվացման եյությունը նրանց բացատրելը—գյուղատնտեսության սոցիալիստական վերաշինության կարևորագույն պայմանն եւ:

Կոլեկտիվ տնտեսությունները չքավորներն ու միջակներն իրենք պիտի կազմակերպեն, իսկ պրոլետարիատն ու նրա կուսակցությունը ղեկավարում և ոգնում են նրանց այդ գործում: Հենց այդպիսի դրույթ և տվել լենինը և տալիս ե կուսակցությունը: Սակայն շատ տեղերում դա հաշվի չեր առնվում: Չքավորների մեջ առանց մի վորեւ նախնական աշխատանք կատարելու, կամ սահմանափակվելով մեկներկու ձևական ժողովներով, հաճախ անցկացվում եր ամբողջ գյուղի կոլեկտիվացումը: Այդ պատճառով դեպքեր են յեղել վոր (չասենք արդեն միջակների մասին) նույնիսկ իրենք, չքավորները, գուրս են յեղել կոլեկտիվացման դեմ:

Այդպիսի մեթոդը բացի վնասից, ուրիշ վոչինչ չեր տալիս: Յեթե նույնիսկ այդպիսով հաջողվում եր կոլխոզ կազմակերպել ապա նա շատ շուտով ցրվում եր, իսկ գյուղա-

ցիների մեջ անհավատարմություն եր մնում գեպի կոլեկտիվացման գաղափարը:

ՑԵԿՐՈՐԴ. — Կոլխոզի հարաբերության վերաբերմամբ ԽՍՀՄ գանգան շրջաններում պայմանների տարբերությունը հաւաք առնելու լենինյան սկզբանների խախտումը:

Խորհրդային Միությունն ահազին յերկիր ե, վորը տարբեր տնտեսական կառուցվածքով և կուլտուրայի մակարդակով ամենաստարբեր շրջաններ ունի: Մի կողմից մենք ունենք այնպիսի շրջաններ և յերկրամասեր, ինչպիսին են Հյուսիսային Կովկասը, Ներքին, Միջին Վոլգայի շրջանները, վորտեղ հացահատիկային տնտեսությունը զարգացման ավելի բարձր աստիճանի վրա յե կանգնած, վորտեղ հողի մշակման նորագույն ձևերն են գործադրվում, վորտեղ հացամթերումների և կուլակության սահմանափակման ձնշման լողունդի հետևողական կիրառման հետեանքով մենք կարողացնեանք կուլակին մեկուսացնել և ամրապնդել չքավորների կազմակերպությունն ու դաշինքը միջակի հետ, վորտեղ պրոլետարական ղեկավարությունն ուժեղ ե, վորտեղ համարյա լիակատար կոոպերացման են յենթարկված բոլոր տընտեսությունները (մատակարարող և սպառողական ցանցում), վորտեղ, վերջապես, համեմատաբար ավելի բարձր ե գյուղացիության կուլտուրականությունը: Մյուս կողմից մեզ մոտ կան այնպիսի շրջաններ, վորտեղ գյուղատնտեսությունը տարվում ե զեռ նախադարյան ձևով, առանց նույնիսկ այնպիսի մեթոդների գործադրության, ինչպիսին են՝ գութանը, վորտեղ կուլակը և բայց վոչ միայն զեռ չեն մեկուսացված, այլ և անապին ազգեցություն ունեն առությ տնտեսական (իսկ հաճախ նաև քաղաքական) կյանքում, վորտեղ զեռ պահպանվել ե քոչկրբ տնտեսությունը, վորտեղ չքավորներն ու բատրակները թույլ են կազմակերպ-

ված, վորտեղ պրոլետարական ազգեցությունը դեռ շատ քիչ ե, վորտեղ կոռապերացիան նոր ե սկսում զարգանալ։ Այս յերկու ծայրահեղ հակառիք շրջանների հետ միասին մենք ունենք նաև այնպիսի շրջաններ (յերկրամասեր), վորոնք տնտեսական ձեւերի, քաղաքական հասունության և կուլտուրականության տեսակետից գտնվում են այսպես ասած՝ միջին դրության մեջ։ Բացի դրանից, յուրաքարչյուր շրջանում կան զարգացման տարբեր (բարձր կամ ցածր) մակարդակի վրա գտնվող ռայոններ։

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր կոլեկտիվացումն անցկացնելիս միատեսակ մոտենալ բոլոր այդ շրջաններին (յերկրամասերին) և ռայոններին չի կարելի։ Հաշվի առնելով այդ, Կենտրոնական Կոմիտեն 1930 թվի հունվարի 5-ի իր վորոշման մեջ Խորհրդային Միության բոլոր շրջանները բաժանեց յերեք խմբի, վորոնցից յուրաքանչյուրի մեջ կոլեկտիվացման տեմպերը պետք ե տարբեր լինեն։ Առաջին խումբն են կազմում առաջավոր շրջանները. բարձր զարգացման հացահատիկային կուլտուրաներով (Հյուսիսային Կովկաս, Միջին Վոլգայի և Ներքին Վոլգայի շրջանները); Այս շրջաններում կարելի յե կոլեկտիվացումն հիմնականում ավարտել 1931 թվի գարնանը։ Յերկրորդ խումբն են կազմում զարգացած հացահատիկային կուլտուրաների շրջանները, սակայն կոլեկտիվացման համար ավելի քիչ պատրաստված (կոռպերացումը, կուլակի մեկուսացումը, պրոլետարական զեկավարությունը, մեքենաների մատակարարումը և այլն): Այդ շրջանները կոլեկտիվացումը հիմնականում կարող են ավարտել 1932 թվի գարնանը։ Մնացած բոլոր շրջանները, վորոնք կոլեկտիվացման համար ավելի և քիչ են պատրաստված, «կոլեկտիվացումը կարող են յերկարացնել մինչև հնգամյակի վերջը, այսինքն մինչև 1933 թիվը» (Ստալին):

Կուսակցության հենց այս ցուցմունքները մոռացել են տեղական կազմակերպություններից շատերը։ Թե ուր ե տանում այդ մոռացումը—դրա ցայտուն պատկերը տվեց ը. Ստալինն իր «Պատասխանում կոլխոզնիկ ընկերներին»։

«Դուքս յեկավ, վոր կոլխոզարժման առաջին հաջողություններով տարված մի քանի ընկերներ մոռացել են Լենինի ցուցմունքներն ու կե վորոշումը։ Մոսկվայի շրջանը կոլեկտիվացման ուղղրած թվերի համար իր տեսդային վազքում 1930 թվի աշունի աշխատողներին ուղղություն տալ կոլեկտիվացումը 1930 թվի գարնանը վերջացնելու, չնայած վորոնա իր տրամադրության տակ ուներ գետ յերեք տարուց վոչ պակաս (մինչև 1932 թվի վերջը): Կենտրոնական Սեանոյյան շրջանը, չկամենալով «յետ մնալ ուրիշներից», սկսեց ուղղություն տալ իր աշխատողներին կոլեկտիվացումը 1930 թվի առաջին կիսում ալվարտելու, չնայած վոր իր տրամադրության տակ ուներ յերկու տարուց վոչ պակաս (1931 թվի վերջը): Իսկ անդրկոլխոզիներն ու թուրքեստանցիներն առաջարկում առաջավոր շրջաններին «համանել և անցնելու» իրենց վորոշմամբ ուղղություն տվին կոլեկտիվացումը «ամենակարճ ժամանակամիջոցում» ավարտելու, չնայած վոր նրանք իրենց տրամադրության տակ ունեցյին ամբողջ չորս տարի (1933 թ. վերջը): Հասկանալի յե, վոր կոլեկտիվացման այդպիսի հապճեպ «տեմպի» ընթացքում կոլեկտիվացման համար ավելի քիչ պատրաստված շրջաններն ավելի պատրաստված շրջաններից «անցնելու» իրենց բուռն ձգտումով, ստիպված յեղան գործի դնել ուժեղ վարչական ձնշումը, փորձելով կոլխոզարժման արագ տեմպերի համար պակասող գործոնները փոխարինելու իրենց սեփական վարչական թափով։ Հետևանքներն հայտնի յեն: Բոլորին հայտնի յե այն խառնաշփոթը, վոր ստացվեց այդ շրջաններում և

վորը հետո անհրաժեշտ յեղավ կարգավորել Կենտկոմի միջամտությամբ»:

ՑԵՐՌՈՒ—շարժման չափարարված ձեվի վրայից անցնելու անքաղաքացիության մասին լենինյան սկզբունքի մռացման տարր՝ կոլխոզների վերաբերմանը: Այդ խեղաթյուրումը կայանում է հետեւյալում: մոռանալով Կենտկոմի ցուցմունքի մասին, վոր ներկա շրջանում կոլխոզների հիմնական ձեր պետք ե լինի գյուղատնտեսական արտելը,—մի շարք տեղերում սկսեցին արհեստականորեն կոմունաներ կազմակերպել, ըստ վորում «կոմունարների» մոտ ամեն ինչ համայնացնում ելին՝ և անասունը և հավերը և բնակավայրերը և այլն: Յեկ այդպիսի գեղարկում հաշվի չելին առնվորմ գյուղացիների կամքն ու բողոքները: Ի հարկե, այդպիսով կազմակերպված «կոմունաները» շուտով ցրվում ելին, իսկ նախկին «կոմունարների» մեջ գեղի կուեկտիվացումը թերահավատ վերաբերմունք եր առաջ գալիս և նրանք խուսափում ելին նույնիսկ գյուղատնտեսական արտելից:

Նույնպիսի խեղաթյուրում ե յեղել նաև այն, վոր միքանի տեղերում ձևականորեն կոմունա չստեղծելով և կազմակերպելով գյուղացիներին արտելի կանոնադրության հիման վրա, այնուամենայնիվ համայնացնում ելին արտելի անդամների մանր անասունը և կովերը, վորոնք անտեսության համար սպառողակոն նշանակություն ունեն:

Գնահատելով այդ խեղաթյուրումը, վորպես կոլխոզի նարության վերաբերյալ լենինյան սկզբունքների առանձնապես ակնհայտնի խախտումն, 16-րդ համագումարը հատկապես նրա վրա շեշտել է.

«Կոլխոզի հիմնական ձեն ե ներկա շրջանում գյուղատնտեսական արտելը: Պահանջել վոր գյուղացիները արտել մտնելով, անմիջապես հրաժարվեն ամեն աեսակի անհատա-

կանության սովորություններից և շահերից, հրաժարվեն լրացուցիչ անձնական անտեսություն (կով, վոչխար, թոշուն, բանջարանոց) վարելու հնարավորությունից, իր համար կողմակի յեկամուտից ողտվելու հնարավորությունից և այլն—նշանակում ե մոռանալ Մարքսիզմ-Լենինիզմի այբուբենը» (կուսակց. 16-րդ համագումարի բանաձեկից՝ ը. Յակովիկ «կոլխոզարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» զեկուցման առթիվ):

ԶՈՐՈՒ—կոլխոզ «գիգանտներ» կազմակերպելով տավելը: Այդ խեղաթյուրումը կայանում է նրանում, վոր միքանի ընկերներ, չբավականանալով մանր (մի խումբ տընտեսություններից կամ մի գյուղից) կոլխոզներ կազմակերպելով, ձգտում ելին ամբողջ ուայոններում մի խումբ գյուղեր մի կոլխոզ—«գիգանտ» գարճնել: Ուոցրած վարչություններ ելին կազմակերպվում, այդպիսի «գիգանտների» մեջ մտնել չուղղողներին ստիպում ելին մտնել և այլն: Դրանետ միասին և վոչ մի գործնական աշխատանք չեր կատարվում այդպիսի գիգանտի իսկական ձևակերպման, նրա տընտեսական դրամերի կազմակերպման համար և չեր ել կարող կատարվել վորովհետեւ այդ աշխատանքում վոչ մի փորձառություն չկար: Դրա հետեւանքով կազմակերպվում ելին վոչ միայն «գիգանտը», այլ նաև նրանում կազմակերպված կոլխոզները:

Նույնպիսի կոպիտ սխալ եր նաև մի շարք տեղերում ինտենսացիոնալ կոլխոզների կազմակերպումով տարվելը: Դա այսպես եր կատարվում. որինակ, ելին, ալդեն ձևակերպված գերմանական կոլխոզին միացնում ելին շըջակա ուսև և ուկայացի գյուղացիներին: Այս դեպքում նրանք միանում ելին և աշխատում ելին: Սակայն բոլորովին վատ եր լինում այնպիսի գեղարկում, յերբ այդպիսի կոլխոզները բռնի

ուժով եյին կաղմակերպվում: Նրանց մեջ միացած զանազան աղբության գյուղացիները, տարբեր կենցաղային և տնտեսական կացությամբ, բացի վոմանցից, նույնիսկ խոսակցության մեջ իրար չեյին հասկանում: Հետևանքը—կոլխոզում տարածայնություններ են առաջանում, գործերը վատանում են և այդպիսի կոլխոզը ցրվում է:

ՀԻՆԳԵՐՈՐԴ:— Վարչական մերոդների գործադրումը կրկնողի ներում: Այդպիսի դեպքերում վարչական ինքնավարությունը, կոլխոզնիկների ինքնազործունեությունն ու տնտեսական ինիացիալիվը փոխարինվում եյին լիազորների բրիգադիրների և այլ կողմից արվող հրամաններով: Ըստությունների փոխարինումը նախագահը նշանակվում էր: Կոլխոզի վարչությունը անգործության եր մատնվում և նրան փոխարինում եր նախագահը: Տնտեսությունը վարելու գործում կոլխոզնիկների վոչ մի կոլեկտիվ աշխատանք չեր լինում: Ամեն ինչ գարձյալ կատարվում եր հրամանով: Յերբ կոլխոզի մեջ այդպիսի գրություն է, վոչ մի գիտակից գիտցիպինայի և կոլխոզնիկների ինքնազործունեության մասին խոսք չի կարող լինել: Այդպիսի խեղաթյուրումներն ի նկատմամբ 16-րդ համագումարը մատնանշեց, վոր «աշխատանքի բարձրագույն արտադրողականության հասնելու համար անհրաժեշտ նոր հասարակական դիսցիպլինայի ստեղծելը կոլխոզներում կարող ե իրացվել միայն իսկական ինքնազործունեության և տնտեսության վարչության մեջ կոլխոզնիկների ակտիվ մասնակցության հիման վրա» (կուսակցության 16-րդ համագումարի բանաձեկց՝ ը. Յակովլեվի գեկոցման առթիվ):

ՎԵՅՏԵՐՈՐԴ—միջակին հաշվի չառնելլ: Այդ խեղաթյուրումն յենթարկված են յեղել (և այժմ ել կան) առանձնապես շատ կոլխոզներ: Համարելով, վոր կոլխոզը պիտի դեկավա-

րեն միայն չքավորները, կոլխոզներից շատերը կոլխոզի վարչության գործին բոլորովին չեյին քաղում միջակին, չեյին ուղում ոգտագործել նրա տնտեսական փորձառությունը կոլխոզի աշխատանքը կաղմակերպելու համար, յետ եյին մղում միջակին կոլխոզի տնտեսության կարգավորման դործում ակտիվ մասնակցելուց: Ուրիշ գեղքերում կոլխոզների վարչության մեջ միջակներին միայն գուտ ձևական «ներկայացուցչություն» տալով, ամեն կերպ սահմանափակում եյին, նրանց տնտեսական նախաձեռնությունը:

Այդպիսի գրությունը, այնտեղ, վորտեղ յեղել ե նա, միջակ-կոլխոզնիկների մեջ անբավարարություն և առաջ բերել և հաճախ բարդացըրել կոլխոզի աշխատանքը: Այդ բոլորը հասցնում եր այնտեղ, վոր միջակը հուսախար յեղած դուրս եր գալիս կոլխոզից: Խակ յերբ միջակի կոլխոզից հեռանալը մասսայական չափեր եր ստանում, կոլխոզը ցըրվում եր: Բացի դրանից, այդպիսի վերաբերմունքը գեպի միջակը կոլխոզների մեջ արգելը եր հանդիսանում միջակ անհատականների նոր մասսաներին դեպի կոլխոզ քաշելու գործում:

Խեղաթյուրման այդ տեսակի ուղղելն առանձնապես կարևոր է, հիշելով 16-րդ համագումարի վորոշումը, վոր կարելուրազույն հացահատիկային շրջաններում միջակ կոլխոզնիկը խորհրդացյան իշխանության նույնպեսի հաստատ հենարան և, ինչպես և չքավոր կոլխոզնիկը:

Այժմյանից ԽՍՀՄ կարևորագույն հացահատիկային շրջաններում գյուղը յերկու հիմնական մասի յե բաժանվում: Խորհրդացյան իշխանության իսկական և հաստատ հենարան: Հանդիսացող կոլխոզնիկների և չքավորներից ու միջակներից բաղկացած վոչ կոլխոզնիկների, վորոնք առայժմ չեն կազմենում կոլխոզ մտնել, վորոնց առկայն կոլխոզների մասսա-

յական փորձը համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կհամոզի կոլեկտիվացման ուղիի վրա կանդնելու անհրաժեշտության մեջ» (կուսակցության 16-րդ համագումարի բանաձևից՝ ընկ. Յակովլիկի «Կոլխոզարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» գեկուցման առթիվ):

Յելենելով հենց այս դրույթից, կուսակցության 16-րդ համագումարն ընկ. Յակովլիկի զեկուցման առթիվ ընդունած բանաձևում մատնանշեց, վոր անհատականից կոլեկտիվ տրնտեսության անցնելու աշխատանքը «պարտավորեցնում և սիստեմաթիկաբար քաշելու միջակներին կոլխոզների դեկավարության գործին»:

ՅՈՒԹԵՐՈՐԴ—առանձին կոլխոզների իրենց նեղ ըցանակ-ներաւան ներփակվելու փորձերը, չընդունելով կոլխոզի մեջ նոր անդամներ: Խեղաթյուրման այդպիսի ձեռն առանձնապես ծաղկում և այնտեղ, վորտեղ շատ զյուղացիներ կոլխոզներից հեռացել են, իսկ կոլխոզներում մնացած գյուղացիներն ել կարողացել են ինչպես հարկն և կազմակերպվել և կարդապերել աշխատանքը: Այդպիսի դեպքերում կոլխոզնիկների մեջ նոր անդամներ ընդունելուց յուրահատուկ վախ և յանկություն և առաջ գալիս «սովորեցնելու» նրանց, ովքեր առաջ կոլխոզից դուրս են յեկել: «Հազըրի վրա ամեն ոի հիմարն ել կդա»—դատում են այդպիսի դեպքերում կոլխոզնիկներից մի քանիսը:

Յուրաքանչյուրի համար պարզ ե, վոր նման դատողությունները և կոլխոզի նոր անդամներ (նույնիսկ առաջ դուրս յեկածներից) ընդունելու դժկամությունը վոչ մի ընդհանուր բանի չունի կոլխոզշինարարության ասպարիզում մեր քաղաքականության հետ: Կոլխոզ մտնել ցանկացող յուրաքանչյուր չքաղորի և միջակի առաջ վոչ միայն արդելքներ չպիտի դնել այլ նաև դրանում ամեն կերպ պետք և ողնել նրանց:

Տեսնելով, վոր կոլխոզնիկներից և անհատականներից մի քանիսի միջև հարաբերությունների աննորմալ լինելն արգելք և հանդիսանում կոլեկտիվացման ծավալման համար, 16-րդ համագումարը հատկապես ընդգծեց այդ վտանգը.

Այս տարվա գարնանը մի շարք տեղերում՝ (կոլտընտեսություններից հեռանալու և կոլտնտեսությունների պահպանման համար առավել ակտիվ և կոլեկտիվացման գործին նվիրված կոլտնտեսականների մղած պայքարի հետևանքով) կոլտնտեսականների և անհատականների միջև ծագած սուր հարաբերությունները խոչնոտ են հանդիսանում կոլեկտիվացման հետագա աշխատանքներին: Այդ պատճառով համագումարը բոլոր կուսակցական կազմակերպությունների վրա պարտք և դնում աշխատել, վորպեսզի կոլտնտեսականներն անհատականների հետ ունեցած իրենց փոխհարաբերությունների մեջ հետոյալ կանոնը պահպաննեն, չհալածել անհատականներին, այլ ոգնել նրանց և խմեն կերպ գրավել գեպի կոլտնտեսությունը» (ը. Յակովլիկի զեկուցման առթիվ 16-րդ համագումարի ընդունած բանաձևից):

ՈՒԹԵՐՈՐԴ. կուլտակի դեմ ուղղված պայքարի միջոցները միջակների վրա յեփս տարածելիք: Պարզ ե, վոր միջակների «պակուակացումը», նրանց ընտրողական իրավունքներից զրկելը և այլն միայն այն պատճառով, վոր նրանք կոլխոզ են մտնում, միջակի հետ զաշինքի ամրապնդման ուղղված մեր դասակարգային քաղաքականության կոպիտ խեղաթյուրումն է հանդիսանում:

Այս բոլոր և դեռ շատ ուրիշ խեղաթյուրումները կոլխոզշինարարության ասպարիզում, հաճախ «ձախ» չափազանց «հեղափոխական» խոսքերով քողարկված, վոչ միայն դժվարություններ են առաջացնում կոլեկտիվացման ծավալման գործում, վորոնցով ոգտվում են աջ ոպորտունիստները, այլ նույնիսկ մի ժամանակ սպառնալիքի տակ եյին դրեւ

ամբողջ կոլխոզային շարժումը: «Այդ սխալները—ասում է կուսակցության 16-րդ համագումարի բանաձևը ը. Յակովի ներկայացման առթիվ—լոչ միայն հակակոլխոզային յելույթներ առաջ բերին մի շարք ուայներուու, այլ նաև առանձին դեպերում կուտակուրյան ներգործուրյամբ այդ յելույթները վերածվեցին հակախորհրդային յելույթների: Հստ վորում առավել և անհանգստացուցիչ եր այն փաստը, վոր կուսակցական կազմակերպությունների կողմից հազվագյուտ չելին ստեղծված դրությունը քողարկելու և փոխանակ իրենց սխալներն ու թերությունները ճանաչելու և ուղղելու, ամեն ինչ միջակի ստատանումներին վերագրելու փորձերը:

Յեթե այդ սխալները կուսակցության կենտրոնական կոմիտեյի կողմից ժամանակին չուղղվելին, ապա դա սպառնում եր զյուղատանտեսության կոլեկտիվացման գործը վիճեցնել: Քանի ի սորհը բայց այս պետության հիմքը—բանակոր գասակարդի դաշնաքը զյուղացիության հետո»:

Այս բոլորը հիշելով, անհրաժեշտ ե աչալը ջորեն հետևել կոլխոզինարարության ասպարիզում կուսակցության գծի ամեն տեսակի խեղաթյուրումներին և ամրող յեռանդով պայքարել նրանց արտահայտումների դեմ: Դրա հետ միաժամանակ պետք ե հիշել վոր «Ճախ» խեղաթյուրումների դեմ ուղղված պայքարը յերաշխեք ե հանդիսանում կոլխոզինարարությունը վիճեցնելու աջ ոպրորտունիսաների փորձերի դեմ մղվող պայքարի հաջողության համար, վորովհետև.

«...«Ճախ» խեղաթյուրիների սխալները կոլխոզարժան ասպարիզում այնպիսի սխալներ են, վոր կուսակցության մեջ աջ թեքման ուժեղացման և ամրապնդման համար բարենպատ պայմաններ են ստեղծում: Ինչու համար: Վորովինետև այդ սխալները խեղաթյուրված լուսաբանությամբ են ներկայացնում կոսակցության գիծը, նշանակում են նրանք հեղտացնում են կուսակցության վարկաբեկման գործը և հետևաբար հեղտացնում են աջ տարրերի պայքարը կուսակցության զեկավարության գեմ: Կոսակցական զեկավարության վարկաբեկում այն տարրական հողն ե, վորի հիման վրա և կարող ե ծավալվել աջ թեքումավորների պայքարը

կուսակցության գեմ: Այդպիսի հող են տալիս աջ թեքումավորներին «Ճախ» խեղաթյուրիները, նրանց սխալներն ու խոտորումները: Այդ պատճառով աջ ոպրորտունիզմի գեմ հաջողությամբ պայքարելու համար, պետք ե հաղթահարել «Ճախ» ոպրորտունիստներին: «Ճախ» խեղաթյուրիները ոքյեկտիվորեն աջ թեքումավորների դաշնակիցներն են հանդիսանում» (ի. Ստալին—«Պատասխան կոլխոզնիկ ընկերներին»):

Այդ սխալների և խեղաթյուրումների ուղղման հետեւ վաճառված արդեն 1930 թ. աշնանը նկատվում եր կոլխոզարժաման զգալի վերելքը: Այդ վերելքը հետագայում հետզհետե ամելով, ժամանակին առաջ բերեց կոլխոզարժման մի նոր հզոր ալիք: Գյուղացիական տնտեսությունների նոր միլիոններ լցվեցին կոլխոզների շարքերը: Կուսակցության գծի ձիշտ կիրառումով կոլխոզարժման ասպարիզում, պայքարը նրա աղավազումների գեմ, ոգտագործելով առաջին կոլխոզային գարնանացանի սխալներն ու դասերը, մենք կարողացանք զգալիորեն ամրապնդել գոյություն ունեցող կոլխոզները և ներկայում արդեն կիրառել կուսակցության Կ.Կ. դեկտեմբերյան պլենումի վորոշումը ԽՍՀՄ բոլոր տրնտեսությունների կեսից վոչ պակասը 1931 թվ. ընթացքում կոլխոզների մեջ ներգրավելու մասին: Ամենավերջին տվյալների համաձայն, մինչև հունիսի 1-ը Խ. Միության բոլոր գյուղաց. տնտեսությունների 52,7 տոկոսը (այսինքն 13.033 հազար գյուղացիական տնտեսություններ) արդեն կազմակերպված են կոլխոզներում: Հստ վորում համաձայն նույն պլենումի վորոշումների, հացահատիկային շրջանները առաջազոր գերբերումն են. Ուկրաինա-դաշտավայր—82,9 տոկոս, Հյուսիսային Կովկաս—82 տոկոս, Խ. Վալգա—81,9 տոկոս, Միջին-Վոլգա (Ճախ ափը)—86,1 տոկոս.:

Հյուս. Կովկասի, Ներքին և Միջին Վոլգայի բազմաթիվ գյուղեր ամբողջապես կոլեկտիվացված են: Այս փաստերը ցույց են տալիս, վոր չքավոր և միջակ գյուղացիությունը ճիշտ և հասկացել կուսակցության քաղաքականությունը և նրա պայքարը խոսորումների և աղավաղումների դեմ՝ կուլտիվացման ասպարիզում:

## Վ. ՍԽԱԼՆԵՐԻ ՅԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈՒՄԸ ՆԱՀԱՆՉ ԶԵ

«Համագումարը վճռականորեն դեն և շպրտում աջ թերումավորների և «ձախ» խեղաթյուրիչների հայտարարություններն այն մասին, վոր իբր թե հակամիջակային խոռորումների ուղղումը նշանակում եր կուսակցության նահանջը իր վվավոր գծից» (16 համագումարի՝ ՀԿ(թ)կ հենտկոմի հաշվետվության առթիվ ընդունած բանաձեկից):

Յուրաքանչյուր առողջ դատող մարդու համար հասկանալի յե, վոր այս կամ այն աշխատանքում յեղած սխաների և խեղություրումների դեմ պայքարելն այդ աշխատանքից հրաժարվել չի նշանակում: Սակայն կուսակցության պայքարը կովսողինարարության ասպարիզում յեղած կուները և «ձախ» թերումավորներն այնպես են բացատրում, վոր իբր թե կուսակցությունը վերաքննում ե գյուղատրնեսության կոլեկտիվացման քաղաքականությունը:

Աջերն անում են այդ՝ կամենալով վարկաբեկել կուսակցության գիծը և «ձախերն» ել այդպես են բացատրում, ցանկանալով ծածկել և արդարացնել իրենց թույլ տված սխաներն ու խեղաթյուրումները: Ահա թե ինչու 16-րդ համագումարն անհրաժեշտ դատավ հատկապես շեշտել այդ մոմենտը կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունած բանաձեկում:

Սակայն կարգով քննենք և տեսնենք, հիմք կմ արդյոք պնդելու, վոր խեղաթյուրումների և խոտորումների դեմ մղվող պայքարը նահանջ և ներկայացնում կուսակցության վվավոր գծից՝ կովսողինարարության հարցերում:

Ինչի՞ դեմ և պայքարում կուսակցությունը:

Առաջինը՝ կուսակցությունը պայքարում և բռնի ուժով կովսողներ կազմակերպելու դեմ: Կովելով «կոլեկտիվացման» այդպիսի մեթոդների դեմ, կուսակցությունը վճռականորեն պնդում ե, վոր գյուղացիների միացումը կովսողների մեջ պետք և կատարվի նրանց կամավոր ցանկության հիման վրա: Դրանով կուսակցությունն ապահովում և կովսողինարարության գործում լենինյան սկզբունքների իրականացումը: Դրանով կուսակցությունն ապահովում և իսկական, ամրակուռ կոլեկտիվ տնտեսությունների ստեղծումը, վորոնք կարողանան որինակ գառնալ դեռ ևս կովսող չմտած գյուղական տնտեսությունների համար: Նշանակում և արդյոք այս բոլորը, վոր կուսակցությունը յետ և նահանջում կոլեկտիվացման գաղափարից: Միայն ուղղակի անբարեխիղ մարդիկ, միայն մեր թշնամին կարող և այդ պնդել կամենալով վարկաբեկել կուսակցության գիծը:

Երրորդ՝ կուսակցությունը կովում և կոլեկտիվացման ընթացքում յեղած հակամիջակային խոտորումների դեմ, բանվոր դասակարգի և չքափորության դաշինքը միջակի հետ խախտելու դեմ: Նշանակում և արդյոք սա, վոր կուսակցությունը հրաժարվում և միջակին կովսողների մեջ ներգրավելուց կամ վերաքննում և միջակի հետ դաշինքը ամրապնդելու իր քաղաքականությունը: Բոլոր վերև դրվածը ցույց և տալիս այդպիսի հարցի անմտությունը:

Յերրորդ՝ կուսակցությունը կովում և Խորհրդային Միության տարբեր ըրջաններում կոլեկտիվացումը միատեսակ մեթոդներով և տեմպերով անցկացնելու դեմ: Սակայն դա բոլորովին չի նշանակում, վոր կուսակցությունը նահանջում և կոլեկտիվացման այն տեմպերից, վորոնք նշանակված են կենտկոմի 1930 թ. հունվարի 5-ի բանաձեկում, հաստատված են կուսակցության 16-րդ համագումարի վորոշման

մեջ և գործնականորեն զարգացված են 1930 թ. գեկտեմբերյան պլենումը վորոշութերի մեջ:

Զորորդ՝ կուսակցությունը պայքարում է, վոր կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու մեր գլխավոր լուգունգը գործնականորեն իրացվի այն ռայոններում, վորտեղ անց և կացվում համատարած կոլեկտիվացումը: Իսկ հետամնաց ռայոնների համար, մինչև վոր այնտեղ մենք դեռ համատարած կոլեկտիվացում չենք անցկացնում, իր ուժի մեջ և մնում ուժանդակի լոգունգը—կուլակության սահմանափակման և հետզհետե յետ մղելու լողունգը: Պատրաստելով այդ ռայոնները համատարած կոլեկտիվացման համար, կուսակցությունը հենց դրանով պատրաստում է այնտեղ ել կիրառելու մեր գլխավոր լողունգը—կուլակությանը վորպես դասակարգ վերացնելու լողունգը: Կարելի յե արդյոք այս հիման վրա ասել, վոր կուսակցությունը հրաժարվում է համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությանը վորպես դասակարգ վերացնելու լողունգից: Յերբեք և վոչ մի չափով: Կուսակցության 16-րդ համագումարի բոլոր բանաձեռքը և նրա գործնական աշխատանքն ակներև կերպով ապացուցում են այդ:

Մոտիկ քննությունից հետո նույնպես ջարդ ու փշուր են լինում կուսակցության պայքարը սխալների և խեղաթյուրումների դեմ վորպես նահանջ ներկայացնելու բոլոր նացած փորձերը: Այն մարդկի վորոնք դատարկ խոսում են նահանջի մասին, նրանք՝

«... չեն հասկանում հարձակման դասակարգային եռւթյունը: Պոսում են հարձակման մասին: Սակայն հարձակում վեր դասակարգի վրա և վեր դասակարգի դաշնակցությամբ: Մենք հարձակում ենք կատարում գյուղի կապի ապահուական տարրերի վրա միջակի դաշնակցությամբ,

վորովհետև միայն այդպիսի հարձակումը կարող է մեզ հաղթանակի բերել: Սակայն ի՞նչ անել յեթե կուսակցության առանձին ջոկատների վորությամբ տարված լինելու պատճառով հարձակումն սկսի շեղվել իր ճիշտ ուղիյից և իր սուր ծայրով ուղղվի մեր դաշնակցի-միջակի դեմ: Միթե մեզ հարկավոր ե ամեն մի հարձակում և վոչ թե հարձակում մի վորոշ դասակարգի վրա և վորոշ դասակարգի դաշնակցությամբ: Զե վոր Դոն-Քիշոտն ել յերեակայում եր, վոր նա հարձակում ե թշնամիների վրա, գրոհելով ջրաղացի վրա, Սակայն հայտնի յե, վոր նա իր ճակատը ջարդեց այդպիսի, թող թույլ տրվի ասելու, հարձակումից» (Ի. Ստալին «Պատասխան կոլխոզների ընկերներին»):

Այդպիսով այս խոսակցությունները, վոր իբր թե կուսակցության պայքարը կոլեկտիվացման լենինյան քաղաքականության խեղաթյուրությունների և խռորությունների դեմ նահանջ և հանդիսանում, կուսակցության բացարձակ և գաղտնի թշնամիների զրաքարտությունն են նրա վերաբերմամբ: Ամենից լավ գա ապացուցվում ե կենտրոնի դեկտեմբերյան պլենումի վորոշումով այս տարվա ընթացքում Խորհրդային Միության գյուղացիական տնտեսությունների կեսը կոլեկտիվացման յենթարկելու մասին և այդ վորոշման հաջող կիրառումով հենց այս տարվա գարնանացանի ընթացքում արդեն: Այդպիսի խնդիր դնել և իրագործել հնարավոր եր միայն յեղած խեղաթյուրությունների և սխալների դեմ անողոք պայքարով, վորոնք (սխալները) միջակին և մասամբ չքափորին ել խրտնեցնում եյին կոլխոզներից:

Պայքարն ընդդեմ խոսորությունների—դա գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մեր մղած պայքարի անպայման մի մասն և կազմում:

## VI. ԿՈԼԽՈԶՇԱՐԺՄԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

«Կուսակցության աշխատանքի համար ներկա մոմենտում վճռական նշանակություն և ստանում կոլխոզների մեջ չքավոր և միջակ տնտեսությունների հետագա ներգրավումը կամավորության սկզբունքի հիման վրա, կոլխոզներում աշխատանքի կազմակերպման, բերքի բաժանման պրոբլեմները, կոլխոզային կադրերի պատրաստման պրոցեսը, կուսողային մասսաների կուտարական մակարդակի բարձրացման, կոլխոզի ներսում մանր-բուրժուական տատանումների հաղթահարման, կոլխոզների, վորպես գյուղում սոցիալիստական շինարարության հենակետերի, ամեն կերպ ամրապնդելու խնդիրները»:

Ամբողջ գործնական աշխատանքում գյուղում կիրառելով կոլխոզների վրա հենվելու լողունքը, կուսակցությունը պետք է վճռականորեն կովի անհատական չքավոր-միջակ տնտեսության թերագնահատման և մոռացության տալու ամեն մի տեսդեսցի դեմ, աջակցելով այդ տնտեսություններին, ամրապնդելով չքավորների ինքնուրույն կազմակերպությունը խորհրդներում, կոոպերացիայում և կոլխոզարժման ստորին ողակներում, անհատականների մեջ լայն բացատրական աշխատանք տանելով և ներգրավելով նրանց կոլխոզների մեջ»:

(ՀԿ(Բ)կ 16-րդ համագումարի՝ կենտկոմի հաշվետվ. առթիվ ընդունած բանաձեկց):

Այս հատվածը համագումարի բանաձեկց կոլխոզշինարարության հետագա զարգացման խնդիրի լուծման բանալին և տալիս: Այդ ուղղությամբ հիմնական պահանջները կայանում են նրանում, վոր ա) կոլխոզներում աշխատանքի ձեռն կազմակերպման և տնտեսակարության հիման վրա ամրա-

պընդել նրանց վորպես գյուղի սոցիալիստական վերաշինության համար կատարվող հետագա աշխատանքի հենակետեր, բ) գյուղություն ունեցող կոլխոզներն ամրապնդելով, որինակ դարձնել նրանց գեռ կոլխոզ չմտած բոլոր չքավոր և միջակ անհատականների համար և հենց դրանով ապահովել նրանց (անհատականների) ներգրավումը կոլխոզների մեջ, գ) չքավոր, միջակ անհատականների և կոլխոզի միջն կանոնավոր հարաբերություններ սահմանելով, ապա նաև դեպի այդ անհատականներն ուշադիր վերաբերմունքով նըրանց կոլխոզ մտնելու համար բարենպաստ պայմաննե ստեղծել, դ) գյուղում ամբողջ աշխատանքում կիրառելով կուսողների վրա հենվելու լոգունքը, չմոռանալ, այլ ամեն կերպ ամրապնդել չքավորների կազմակերպությունը խորհրդներում, կոոպերացիայում, կոլխոզշաբթման սկզբանական ողակներում, վորովհետև այդ կազմակերպությունների աշխատանքում, վորովհետև այդ կազմակերպությունների աշխատանքը գյուղի հաջող կուեկտիվացման հիմնական պայմաններից մեկն ե հանդիսանում: Առանց այս պահանջները կատարելու բոլորովին անհարմին ե իրագործել կոլխոզշինարարության այն ծավալը, վոր նշանակված և 1931 թվի համար»:

Դրա հետ միասին անհրաժեշտ ե ընդունել, վոր կոլխոզշինարարության հետագա զարգացման ամենակարենար, վնասական պայմաններից մեկն և նիւթ վերաբերմունելը ամեն ուղղությամբ դեպի գյուղի անհատական չխալոր-միջակ տնտեսությունները: Այդ տնտեսություններն աչքաթող անելը, մոռացության մատնելը վոչ մի գեղքում չի կարելի թույլատրել: Ընդհակառակը, ամեն կերպ ոգնելով նրանց, կուսակցությունն իր առաջ խնդիր և դնում կոոպերացիայի (բոլոր ձեռների), կոնտրակտացիայի և այլն ամենալայն զարգացման միջոցով բարձրացնել այդ տնտեսություններն ու հեղտաց-

նել նրանց համար աշխատանքի կոլեկտիվ ձևերին անցնելը։ Այդ տեսակետից առանձին ուշագրության և արժանի կոռպերատիվային շինարարության զարգացումը թույլ կոլեկտիվացման ռայոններում։ Մինչդեռ տեղական կազմակերպություններից շատերն անհրաժեշտ ուշագրություն չեն ավելի կոռպերատիվային շինարարության։ Անա թե ինչու 16-րդ համագումարը ը. Յակովիկ «կոլխոզարժման և գյուղատնտեսության վերելքի մասին» գեկուցման առթիվ իր ընդունած բանաձեռում ասում ե.

«Համագումարը կատեգորիկ կերպով դատապարտում և հաճախակի պատահող անհատական չքայլոր և միջակ գյուղացիների կոռպերատիվ ձեկի կազմակերպության արհամարտումը, վորի զարգացումն աստիճանաբար կոլխոզներին անցնելու կարեռագույն պայմաններից մեկն և հանդիսանում։ Համագումարը կոպիտ սխալ և համարում կոլխոզային թույլ շարժում ունեցող մի շարք շրջաններում տեղի ունեցած ամենապարզ կոռպերատիվ կազմակերպության (թաղային ընկերությունները և հատուկ արտադրողական-սպառողական ընկերությունները) ստորին ձևերի փաստական լիկիդացիան և առաջարկում և բոլոր կուսկազմակերպություններին անմիջապես ապահովել կոռպերատիվ կազմակերպության վերականգնումն ու հետագա աճումը, ցույց տալով նրան համապատասխան կազմակերպչական և ֆինանսական աջակցություն։»

Կոլխոզների ամրապնդման յեվ նրանց մեջ նոր չխպիր յեվ միջակ տեսակառությունների ներգրավման յերկրորդ վոչ պակաս կարելուրություն յեվ առանձնապես վճռական նշանակություն ունեցող պայմանն և հանդիսանում աշխատանքի արդյունքների յեվ բերքի նիօս բաժանումը կոլխոզներում։ Այդ խնդիրն առանձին կարեռությամբ կանգնած և մեր առաջներկայացման:

Կոլխոզային ցանքսերի տարածության ավելացումը, հողի մշակման բարելավումը, յեղանակի բարենպաստ ողայմաններն—այդ բոլորն ապահովեց կոլխոզների բերքի զգական բարձրացումը։ Հետևաբար առաջին կոլխոզային գարնան արդյունքներն արդեն բարձրացրին յուրաքանչյուր կոլխոզային տնտեսության յեկամուարը։ Այդ որինակի վրա վոչ միայն կոլխոզներներն, այլ և շատ անհատականներ ակներեամողեցին կողեկտիվ տնտեսության ավելի շահավետ լինելու մեջ։ Դա վոչ միայն ամբապներեց գոյություն ունեցող կոլխոզներն, այլ նաև կոլխոզ մտնել ցանկացող չքավոր և միջակ մասսաների մի նոր ալիք բարձրացրեց։

Սակայն կոպիտ սխալ կլիներ յենթադրել վոր յեթե մենք ներկայում նկատում ենք գյուղացիների նոր հոսանք մուպի կոլխոզները, ապա ուրեմն գյուղացին ինքն իրեն «համոզվել ե» արգեն կոլխոզի շահավետ լինելու մեջ և անհրաժեշտություն չկա կոլխոզում լավ դրված աշխատանքի կազմակերպմամբ և բերքի բաժանումով ցույց տալ անհատականին կողեկտիվ տնտեսության շահավետ լինելը։ Անցած կանին կողեկտիվ տնտեսություն ունեցած կոլխոզներն ու խեղաթյուրումներն ուղղելուց հետո և նույնպես կոլխոզների բերքի հավաքման հետևանքով (այդ բերքն ամենուրեք 2—1 և կես անգամ ավելի բարձր եր, քան անհատականներինը), չքավորների և միջակների մի նոր հոսանք առաջացավ գետի կոլխոզները։

Սակայն նրանց մեջ դեռ քիչ չեն տատանվողները։ Հաղթահարել այդ տատանումները, դրդել տատանվողներին վերջականապես անցնել կոլխոզների կողմը՝ կարող և նախ և առաջ գոյություն ունեցող կոլխոզների դրական որինակը։ Դա անհրաժեշտ և վոչ միայն ննացած անհատականների հոսանքը գետի կոլխոզ ուժեղացնելու, այլ և գոյություն ունեցող կոլխոզները պահպանելու և ամբապնելու համար,

վորովհետև աշխատանքի վոչ ճիշտ կազմակերպումը, յեկամուտների սխալ բաժանումը տանումն դեպի կոլխողի քայլացումը:

Աշխատանքի ճիշտ կազմակերպման հիմնական պահանջը կայանում է նրանում, վոր լավագույն և ամենալիակատար չափով ոգտագործվեն ինվենտարը, աշխատող ձեռները և լծկանը: Փորձը ցույց տվեց, վոր այդ պահանջի կիրառումն ապահովող աշխատանքի կազմակերպման լավագույն ձեն և հանդիսանում կոլխողի ամբողջ աշխատանքը վորոշ մասերի բաժանելը և այդ մասերին կոլխողնիկների բրիգադների կցելը, վորոնք պատասխանառու յեն այդ մասում կատարվող աշխատանքի համար: Հստ վորում վճռական նշանակություն է ստանում սոցիալիստական մըցության և հարվածայնության կազմակերպումը կոլխողում, ապա նաև յուրաքանչյուր կոլխողնիկի աշխատանքի ժամանակին հաշվառքը:

Անցած տարվա ընթացքում մենք կոլխողներում աշխատանքի կազմակերպման մեծ փորձառություն ձեռք բերենք: Անհրաժեշտ ե այդ փորձառության տեր գարձնել բուրուր կոլխողնիկներին: Այդ գործում մեծ զեր են խաղալու կոլխողների խորհրդակցությունները, կոլխողների եկամուռախաները հարեւան կոլխողները, կոլխողներում աշխատանքի կազմակերպման կոնկրետ փորձառության լայն լուսաբանումը ստորին մամուլի եղերում: Նունպես լայնորեն հարկավոր ե ոգտագործել կոլխողներում բերքի բաժանման փորձը, վորը մենք ձեռք ենք բերել անցած տարվա ընթացքում: Բերքեց ստացված յեկամուտի բաժանումը հիմնականում պիտի կառուցվի չողողողոկոմի և կոլխոցենտրի մշակած հետեւյալ դրությունների վրա.

ա) Բերքի և յեկամուտի բաժանումը պիտի կատարվի ըստ աշխատանքի քանակի և վորակի:

բ) Կոլխողի համայնացրած կաթնառու անասուններից ստացված յեկամուտի և ամբողջ բերքի 5 տոկոսը պետք է բաժանվի կոլխողի անդամների մեջ, նրանց համայնացրած գույքի արժեքին համապատասխան:

գ) Անբաժան և հասարակական ֆոնդերի հատկացումները կատարվում են հանելով՝ 1) սերմփոնդը, 2) համայնացրած անասունների կերի ֆոնդը, 3) միասնական հարկը, 4) գույքի և ցանքսերի համար ապահովագրական մուծումները վճարելու ծախսը:

դ) Անբաժան ֆոնդի հատկացումներն այս տարի պետք է կազմեն 10 տոկոս, իսկ հասարակական ֆոնդի՝ կուլտուրի բնակչության 10 տոկոս:

ե) Ուրիշ ամեն տեսակի հատկացումները հասարակական ֆոնդերին (հասար. սննդի, մանկամառների և այլն համար) կարող են կատարվել միայն կամավոր կերպով, կոլխողի անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ:

զ) Կերի բաժանումը, յենելով կոլխողնիկների անառողջական ապահովելու անհրաժեշտությունից, պետք է կատարվի, վորպես կանոն, աշխատանքի վարձատրության հաշվին:

ը) Կոլխողի անդամների աշնանացանքները, վորոնք նրանք կատարել են մինչև կոլխող մանելը անհատական կարգով, մնում են ցանողների տրամադրության տակ:

կոլխողկենտրոնի և չողողողկոմի ցուցմունքների մեջ նախատեսնված են նաև կոլխողների՝ պետության ծախելու հացահատիկի չափերը: Հացահատիկային շրջաններում կոլխողները պետությանն են ծախում իրենց հավաքած հացահատիկի  $\frac{1}{4}$ -ից մինչև  $\frac{1}{3}$  մասը: Իսկ վոչ հացահատիկային շրջաններում պետության ծախելու հացահատիկի չափը ընդհանուր բերքի  $\frac{1}{3}$ -ից ավելի չափակի լինի:

Այս ցուցմունքները միանդամայն բավարար են կոլխոզներում բերքի և յեկամտի ճիշտ բաժանման համար գործնականում: Այս ցուցմունքների հիմնական իմաստը համում են նրան, վոր կուսակցությունը վորոշելով բերքի ամենաճիշտ բաժանման հիմնական սկզբունքները, այդ բաժանման միատեսակ, ճշգրիտ ձևեր չի սահմանում: Շոշափելով այդ հարցը, «Պարզան» «բերքի բաժանումը» կոչվող իր առաջնորդող, հոդվածում գրում են. «Կուսակցությունը յենում են նրանից, վոր կոլխոզինարարության մեծագույն բազմազանության պայմաններում անհնարին են սահմանել բերքի և յեկամտի բաժանման ինչ վոր ընդհանուր պարտադիր մանրամասն նորմաներ:

Կոլխոզային շարժումն ապրում է իր ամենաբուռն աճման շրջանը: Կոլխոզների կազմակերպությունը գեռ և տառապում է բարձմաթիվ և խոշոր թերություններից, աշխատանքը շատ վատ կատ և կազմակերպված: Այդպիսի պայմաններում բերքի բաժանումը պետք է ապահովի կոլխոզների ակտիվության նոր մորիլիքացիան կոլխոզինարարության հանգույցային հարցերի, հենց իրեն կոլխոզի դեկավարության գործում կոլեկտիվության տարրերի շուրջը: Ահա թե ինչու կուսակցությունը չի վորոշում բերքի բաժանման մանրամասնությունները, թողնելով այդ անելու կուսակցության ընդհանուր դեկավարության տակ իրենց, կոլխոզներին, համապատասխան յուրաքանչյուր կոլխոզի կոնկրետ պայմաններին»:

Զհասկանալով այդ, աջ թեքումավորները կուսակցության հրաժարումը կոլխոզներում բերքի բաժանման ճշգրիտ մեթոդները ու նորմերը սահմանելուց, գնահատում են վորակես հրաժարումն կոլխոզների համար այդ կարևորագույն աշխատանքի ընդհանուր դեկավարությունից: Աջ թեքու-

մավորները նորից «ինքաննոս» են քարոզում, ձգտում են, վոր կուսակցությունը վոչ մի ազդեցություն չըդրծի, չոգնի կոլխոզներին բերքը ճիշտ բաժանելու և այդպիսով ամրապնդելու կոլխոզները, վորպես սոցիալիստական, կողեւտիվ ձեռնարկություններ:

Իսկ ի՞նչ և նշանակում ճիշտ դեկավարել բերքի բաժանման գործը կոլխոզներում: Դա նշանակում է անել այնպես, վոր կոլխոզային յեկամուտների բաժանումը կատարվի կոլխոզների աշխատանքի քանակի և վորակի հաշվով: Դա նշանակում է, յեկամուից 5 տոկոսանի ֆոնդ հատկացնել կոլխոզներին սեղ բաժանելու համար, համապատասխան նրանցից ամեն մեկի կոլխոզի մեջ դրած գույքին:

Դա նշանակում է, վոր կոլխոզները պետության հացահատիկ ծավակենարոնի և Հողգողկոմի վորոշման մեջ սահմանված չափերից վոչ պակաս: Դա նշանակում է, վոր կոլխոզներին իրենց ավելցուկ հացահատիկները ծախեն վոչ թե մասնավոր շուկայում, այլ պետությանը:

Ահա մեր դեկավարության հիմնական գծերը բերքի բաժանման գործում, կոլխոզներում: Հրաժարվել այդ դեկավարությունից, ինչպես այդ ուզում են աջ ուղղումնիսաւները, նշանակում են թուկացնել կոլխոզային շինարարությունը: Սակայն չի կարելի իրավորել այդ դեկավարությունը հրամայողական և վարչական ձնշման մեթոդներով, ինչպես տեղադրություն են անել «ձախ» քյալլագյողները:

Բերքի բաժանման ամբողջ աշխատանքը պետք է տառնել համոզման և կոլխոզների ակտիվությունն և ինքնագործունեությունն ամենաբարձր աստիճանի ասցնելու հիմնա վրա: Պետք համոզել կոլխոզներին, վոր հացահատիկի ավելցուկն անհրաժեշտ է պետության ծախել: Պետք է ապացուցել վոր հիմնական բերքից հինգտոկություններ:

հատկացնելով կոլխոզում ներդրած գույքի համապատասխան կոլխոզնիկների մեջ բաժանելու համար, նրանք ներդրավում են կոլխոզի մեջ միջակներին։ Պետք է ցույց տալ կոլխոզնիկներին, վոր կոլխոզային յեկամուտների բաժանումն ըաշխատանքի քանակի և վորակի ապահովում և կողեւ աշխատանքի արտադրողականության աճման համար և ընդառանության աճման համար և գործիքի ամեն տեսակին գործից ին ափելու արամադրությունները, իսկ ցույց տալ կոլխոզնիկներին այդ սիստեմի, վորակես աշխատանքային սիստեմ առավելությունները—նշանակում են, վոր կոլխոզնիկները դա գերազանցն ըերքը ըստ փայերի, հողի, շնչի և այլն բաժանելու սիստեմից։

Այդ ամբողջ աշխատանքը, կրկնում ենք, վոչ մի դեպքում չպետք է կատարվի բռնի ստիպողականության կարգով։ Վոչ մի դեպքում չի կարելի թույլ տար վոր բերքի բաժանման բոլոր հարցերը լուծվեն կոլխոզնիկների թիկունքում։ Մենք կոնկրետ որինակներով պիտի համոզենք կոլխոզնիկներին, վոր բերքի բաժանման՝ կուսակցության առաջարկած կանոնները ավելի շահավետ են։ Պետք է առանձին ուշադրություն դարձնել վոր կոլխոզնիկները համոզվեն ակամուտների ըստ աշխատանքի քանակի և վորակի բաժման ավելի շահավետ լինելու մեջ, վորովհետև միայն սիստեմը կարող է աջակցել կոլխոզների առավելագույն զգացման գործին։ Դրա հետ միաժամանակ պիտի և վճռական պայքար հայտարարել կոլխոզներում բերքի ըստ փայերի և շնչերի բաժանում մտցնելու փորձերի դեմ, վորովհետև դա չի կարող աջակցել աշխատանքի արտադրողականության բարձրացման, կոլեկտիվ տնտեսության աճման և ամրապնդման։

Այդպիսով կոլխոզներում բերքի բաժանման մեր դե-

կավարության հիմնական սկզբունքը կայանում է նրանու վոր կոլխոզնիկներին հասրավորություն տրվի ինքնագործունեության միջոցով լուծելու այդ հարցերը։ Զարդացնել կոլխոզնիկների ինքնագործունեությունը ուղղել այն ճիշտ նոր նի մեջ—ահա մեր խնդիրը։ Միայն այդպիսի մեթոդը կամրապնդի կոլխոզները և գորակի նրանց մեջ չքավորների և մշակների հարցուր հազարավոր մասսաներ։

Կոլխոզային շարժումն աճում և ամրապնդվում է։ Յերկրորդ բոլցեկիյան գարնանացանը կոլխոզարժման մի նոր չտեսնված ալիք բարձրացրեց։ Գարնանացանի նախապատրաստություննը և հաջող ընթացքը կոլխոզնիկների նոր մլուններ ավելացրին։ Կուսակցության հիմնական հրահանությունը 1931 թվի ընթացքում Խ. Մ-թյան գյուղացիական տնտեսությունների կեսից վոչ պակասը կողեկտիվների մեջ ներդրավելու մասին՝ արդեն իրազործված են և գյուղտնտեսությունների 52 տոկոսն միացված են կոլխոզների մեջ։ Հոսանքը դեպի կոլխոզները դեռ շարունակվում է։ Հարկավոր և միայն խելացիորեն կազմակերպել այդ հզոր շարժումը, ըստ Լենինի ցուցմունքների ղեկավարել մասսանությը, թույլ չտալով վոչ աջ և վոչ «ձախ» խեղաթյուրումներ վճռականորեն պայքարելով նրանց դեմ և այդպիսով ապահովել և ամրապնդել յերկրորդ բոլշևիկյան ցանքսի հաղթանակները։

Կուսակցության լենինյան քաղաքականության կիրառումը յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կլեկտիվացման գործում, պայքարը կոլխոզինարարություն վիճեցնելու կամ խեղաթյուրելու աջ և «ձախ» փորձերի դեմ ուշադրի վերաբերմունքը դեպի չքավորմիջակ անհատական տնտեսությունը— ահա այն հիմնական պահանջները վորոնք ապահովում են մեզ ավելի ևս մեծ հաղթանակները։

զյուղի սոցիալիստական վերակառուցման գործում, ապահովում են կուսակցության 16-րդ համագումարի և ՀամԿ (բ) և կե և կվէ գեկանմբերյան պլենումի վորոշումների լիակատար իրականացումը:

2232

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կոլխոզինարարության առաջին արդյունքները և լինդիրները (1); Կուսակցության գիծը կոլխոզինարարության ասպարիզում (5); Կոլխոզարժման վիճեցման աջ փորձերի եյությունը (11); Խեղաթյուրումներն ու սիաները կոլխոզինարարության ասպարիզում (23); Միաների և խեղաթյուրումների ուղղումը նահանջ (38); Կոլխոզարժման հետագա զարգացման համար:

«Ազգային գրադարան



NL0182165

Уполномоченный № Н-2938. Ростов на Дону.

газ.-кн. тип. СККПО Ст.-ф. Б 6 125x176 Зак. № 2720. Тираж 1500

31. Թուսանցյան.—Համատարած կուեկտիվացման ավարառումը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի լինդիրները . . . . . 10 »
32. Կասիլով.—Բոլշևիկան յերկրորդ գարնան մարտական լինդիրները . . . . . 5 »
33. Պուկանցյան.—1931 թ. գարնանացանի կամպանիայի գործական լինդիրները . . . . . 5 »
34. Նոր կենցաղի յերանը . . . . . 20 »
35. Առօս Լուսնեց.—Բանաստեղծությունները . . . . . 20 »
36. Լ. Զառչարին.—Հացահատիկի ֆաբրիկա («Գիգանտ» ողջոողի մասին) . . . . . 10 »
37. Ս. Ա. Սևիրելյալի.—Կուլտուրական շինարարության լինդիրները . . . . . 7 »
38. Պ. Շայցենի.—Գալիերի վահմակը, պինու 3 գոր. . . . . 25 »
39. Վ. Մովլանին.—Համկոմկուսէ (բ) ԿԿ-ի և ԿՎՀ 1930 թ. գեկանմբերյան պիտումները . . . . . 5 »
40. Դյալզաններն և կուսանցյան—Դյալզաննենության ինտուսունը Հյուստուային կովկասում և նրանց դիմ կովկալու գիտավոր միջոցները . . . . . 15 »
41. Ռ. Վիլմանսի.—Միլիոնները վատքի հանենք ըյուրուկրատիզմի դիմ պարարելու . . . . . 15 »
42. Ա. Յովկիլինի.—Կոլխոզային շինարարության մասին . . . . . 15 »
43. Ա. Մազահյանի.—Կոլխոզը լինդիրում . . . . . 10 »
44. Ա. Մազահյանի.—Կոլխոզային շարժումը և պայքարը կրօնի դիմ . . . . . 15 »
45. Ա. Ա. Մազենի.—Բներքանավարման մեջնաների ստուգում և ի բնամերը . . . . . 12 »
46. Մ. Դիգուտնին.—Կողմակերպենք բերքանավարը . . . . . 8 »
47. Պ. Ռիսուկովի.—Ընդդիմ խողաթյուրումների և խոտորումների կոլխոզայինարարության ասպարիզում . . . . . 15 »

## ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍԻ, ԵՆ

1. Հյուս. Կոլիկ, հակ. պրոլետարողների ասսոցիացիաի անդամների գըրվածքները
  2. 16-րդ կուսանացառումարի արդյունքները:
  3. Հյուսիսային կովկասի նոգամայակը.—արդյունաքերություն:
  4. Խողարածության կադմակերպումը կոլխոզում:
  5. Կերի հարցը և սիլսոսացումը:
  6. Անդամնաբանության ավագ բանվորների պարտականությունները:
  7. Ձեռնարկ ժխախոսագրքության համար:
  8. Հագարարությունն:
  9. Թոհնաբանությունն:
  10. Աշխատանքի կազմակերպումը յել յիկամուտների բաժանումը կոլխոզային կովկանիների փորձը Հյուս. Կովկասում:
  11. Տրանսպորտը և համայնքը. աեխնիկական ձեռնարկի:
  12. Կոմոմուզը և կուսակցության լինդիրները:
- Դիմու՝ Ռոտով Ա-Դ Բուդենովսկի պր., 60, Կрайнаցիզար.

9166 в 15 400.

С. Х. 12

47814



на армянском языке

П. РЫСАКОВ

Против перегибов и извращений  
в колхозном строительстве

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР.  
“КРАЙНАЦИЗДАТ”